

**ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2019 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2020

Հաստատված է
Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի հոգաբարձուների
խորհրդի նիստում
29 հունվարի 2020 թ.
արձանագրություն N—

խորհրդի նախագահ՝ Ա. Հարությունյան



(ստորագրություն)

29 հունվարի 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2019 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	5
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅՈՒՆ.....	6
ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ.....	7
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	9
ՀԱԱՀ Ա. ԶՈՂԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈԼԵԶ.....	16
ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.....	16
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ.....	17
ՀԱԱՀ ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ.....	17
ՀԱԱՀ ՇԻՐԱԿԻ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈԼԵԶ- ՄԱՍՆԱՃՅՈՒՂ.....	18
ՀԱԱՀ ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ.....	18
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ.....	20
ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC).....	20
ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB).....	21
Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ.....	22
«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵԶՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.....	22
«ԶԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ.....	23
«ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ.....	24
«ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՐ ԶՈՆԴԱՎՈՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ.....	24
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
«ԱԿՈՒՆԸ» ՈՒՍՈՒՄՆԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....	24
«ԲԱԼԱՅՈՎԻՏ» ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	25
«ՈՍԿԵՀԱՏ» ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	26
ՈՍԿԵՀԱՏԻ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....	26
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	27
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	28
ԳՐԱԴԱՐԱՆ.....	39
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ.....	40
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	41
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	44
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅՈՒՆԸ.....	50
ՄԱՐԴԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....	51
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅՈՒՆԸ.....	53

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետադարձ հայացքով գնահատելով 2019 թվականին իրականացված աշխատանքները՝ պետք է արձանագրել, որ անցած տարին համալսարանի համար արգասաբեր էր. տեղի են ունեցել շրջադարձային փոփոխություններ ուսումնական, գիտական գործունեության տարբեր ուղղություններով, ենթակառուցվածքների արդիականացման, միջազգային համագործակցության ընդլայնման ու խորացման առումով: Այսպես՝ ուսումնական պլանների արմատական բարեփոխումներից մինչև դասախոսների աշխատավարձի բարձրացում, դասավանդման նոր մեթոդներից մինչև արդիական նպատակային կրթական ծրագրերի իրականացում, դասախոսների վերապատրաստումից մինչև համալսարանում ստեղծվող գիտական արդյունքի հանրայնացում և առևտրայնացում, գյուղացու համար իրականացվող գիտասփյուն-խորհրդատվական ծրագրերից մինչև արտերկրի գործընկերների գործունե անցկացությամբ միլիոնավոր դրամի արժողությամբ արդիական և գերարդիական կրթական-լաբորատոր-արտադրական ենթակառուցվածքների ստեղծում, եվրոպական առաջատար համալսարաններից մեկի հետ կրկնակի դիպլոմի վերաբերյալ պայմանագրի ստորագրում և ևս մեկի հետ համանման պայմանագրի նախապատրաստում, ուսումնափորձնական տնտեսությունների մեծ ներուժի սթափ գնահատումից ու նորովի օգտագործումից մինչև համալսարանի սեփական գինու արտադրություն: Սակայն այս ամենը համալսարանի 2019 թվականի ոչ բոլոր ձեռքբերումներն են:

Ագրարային համալսարանի ղեկավարության և, առհասարակ, բնականոն ընթացքով նորացված թիմի ամենամեծ ձեռքբերումը, թերևս, համալսարանում բարոյահոգեբանական մթնոլորտի էական առողջացումն է: Հատկանշական է նոր պայմանների, գործընկերության, մասնագիտական ու անձնական հարաբերակցության նոր որակի խրախուսման մթնոլորտի և արդիական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ուսումնառության, դասավանդման ստեղծարար միջավայրի ձևավորման գուճակցումը: Այսպիսով՝ «վավերացվում» է ուսանողակենտրոն գործելակերպը, ուղի է հարթվում կրթական ծրագրերի հաջողության, երկրի գյուղատնտեսության և հարակից ոլորտների համար մրցունակ, վերջին տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստման համար:

2019-ին ամրակայվեց Ագրարային համալսարանի՝ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների առաջատարի դերը: Այս մասին է վկայում նաև ՀԱԱՀ-ի 2019 թ. գործունեության հաշվետվությունը, տարի, որ լավագույնս նախապատրաստել է 2020-ը բեկումնային փոփոխությունների տարի դարձնելու՝ համալսարանի ղեկավարության նոր, հավակնոտ, բայց և միանգամայն իրագործելի ծրագիրը:

Ուսումնական գործընթաց

Համալսարանն անցում է կատարել բակալավրիատի 4-ամյա կրթության համակարգին՝ մեկ աշխատանքային կիսամյակի ներմուծմամբ: Ըստ այդմ, Էականորեն փոխվել են ուսումնական պլանները: Օպտիմալացվել են նաև մասնագիտությունները, կազմվել են նոր մասնագիտական կրթական ծրագրեր՝ հաշվի առնելով արտադրության իրական կարիքները և միջազգային փորձը: Բացառվել է դասախոսությունների թելադրման գործելակերպը:

Բարեփոխվել է դասավանդման մեթոդաբանությունը: Համալսարանում հաջողությամբ թվայնացվում է ուսումնական գործընթացների կառավարումը. ներդրված է և լիարժեքորեն գործում է ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման e-Buh համակարգը:

Սեպտեմբերին 25 %-ով բարձրացել են պրոֆեսորադասախոսական կազմի, 10-15 %-ով՝ ուսումնաօժանդակ աշխատակազմի աշխատավարձերը, 1,5 անգամ անվանական կրթաթոշակները: Աշխատավարձերը շարունակական բարձրացման միտում կունենան:

Դասախոսների և ուսանողների համար կազմակերպվել են անգլերենի, համակարգչային տարբեր ծրագրակազմերի անվճար ու սուբսիդավորվող դասընթացներ: Դասընթացների երեք փուլերին մասնակցել և հավաստագրեր է ստացել 369 ունկնդիր: Բացի այդ՝ համալսարանի դասախոսները վերապատրաստում են անցել արտադրությունում և արտերկրում:

Համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի հնարավորությունների շնորհիվ 20 ունկնդիր մասնակցել է Ջերմատնային մշակաբույսերի արտադրության և կառավարման 8-ամյա կրթական ծրագրին, շուրջ 150 գինեգործների համար կազմակերպվել են վերապատրաստման կարճաժամկետ դասընթացներ, 36 ունկնդիրների համար՝ աշխարհատեղեկատվական համակարգերի (GIS) և հեռահար զոնդավորման (Remote Sensing) գծով վերապատրաստում:

«Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման ու դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակում 2019 թ. մայիսից անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում մեկնարկել են ֆերմերների համար իրականացվող մեկշաբաթյա դասընթացները, որոնց մասնակցել է 110 ֆերմեր ՀՀ տարբեր մարզերից:

Համալսարանի մասնագետները ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքներում իրականացրել են լուլիկի հարավամերիկյան ցեղի դեմ պայքարի միջոցառումների փորձնական ծրագիր 10 հեկտար ընդհանուր մակերեսի վրա (5-ական հա ունեցող 2 ֆերմերային տնտեսություններում): Փորձնական ծրագրի արդյունքները ցույց են տվել, որ այդ վտանգավոր վնասատուն գրեթե իսպառ բացակայում է: Ծրագրի արդյունքների հանրայնացման նպատակով կազմակերպված դաշտային օրվան մասնակցել է 70 ֆերմեր: Ցեղի դեմ պայքարի վերաբերյալ բաժանվել է 5000 տեղեկատվական գրքույկ:

2019-ին մի քանի անգամ ավելացել է ուսանողական նախաձեռնությունների աջակցության ծավալը: Ուսանողական խորհուրդը գործել է մեծ ակտիվությամբ՝ հաճախակի կազմակերպելով ուսումնաճանաչողական, ինտելեկտուալ, մարզամշակութային և այլ նպատակային միջոցառումներ: Ուշագրավ են կենսաբազմազանության միջազգային օրվան նվիրված խորհրդաժողովը, ավելի քան 15 մշակութային, 6 ժամանցային, 13 ճանաչողական, 14 բնապահպանական, 8 ինտելեկտուալ և 18 մարզական միջոցառումները: Տարվա միջոցառումների զարդը Ագրարային

համալսարանի ավանդական «Ոսկե հասկ» մրցանակաբաշխությունն էր, որի ժամանակ մեծ հանդիսությամբ մրցանակներ հանձնվեցին 8 անվանակարգերում հաղթող խմբերին և անհատներին:

Համալսարանում լայնորեն կիրառվում է բաց դասերի գործելակերպը, որը հնարավորություն է տալիս ոլորտի փորձագիտական միտքը բերել համալսարան, միաժամանակ կապեր ստեղծել ուսանողների և պոտենցիալ գործատուների միջև: Շուրջ 50 փորձագետներ, արտադրության ղեկավարներ, գործարար աշխարհի առաջատարներ հրավիրվել են համալսարան՝ համապատասխան առարկայական ծրագրերի շրջանակում արժեքավոր մասնագիտական տեղեկություններ հաղորդելով գյուղատնտեսության և հարակից ոլորտների ապագա պատասխանատուներին:

Գիտական գործունեություն

Արմատապես փոխվել է Ագրարային համալսարանի «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական ամսագրի հոդվածների որակը. փոփոխվել է գրախոսողների կազմը, ներդրվել է «կույր» գրախոսումների գործելակերպը: Ամսագիրը լույս է տեսնում հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով:

Հովիսին հաստատվել է ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգը, ըստ որի՝ ԲՈԿ-ի կողմից ճանաչված, Web of Science, Scopus հարթակներում ընդգրկված գիտական հրատարակություններում, արտասահմանյան բուհերի գիտական հանդեսներում տպագրված աշխատանքների հեղինակները կստանան համապատասխան լրավճար:

Համալսարանի համակարգում գործող գիտական ինստիտուտներում, գիտահետազոտական կենտրոններում տեղի են ունենում հետազոտությունների արդյունավետության բարձրացմանը, միջազգային համագործակցության խորացմանը և գիտական արդյունքի առևտրայնացմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ ՀԱԱՀ-ի գիտական ստորաբաժանումներն իրականացրել են սերմերի, օրգանական կենսապատրաստուկների արտադրության, ցորենի և յուղատու բույսերի մշակման նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրեր՝ մատուցելով համապատասխան ծառայություններ:

Ենթակառույցների ստեղծում

2019 թ. ուսումնառության ենթակառույցների ստեղծման ու վերակառուցման առումով կարելի է համարել Ագրարային համալսարանի տարի: Ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի փոխակերպելու տեսլականին հասնելու ճանապարհին բուն համալսարանում, մասնաճյուղերում և ուսումնափորձնական տնտեսություններում իրականացվող լայնամասշտաբ շինվերակառուցողական աշխատանքների ծավալն աննախադեպ է. ավելի քան 2000 քառ.մ, որից մոտ 1200-ը հիմնանորոգվել է ամբողջությամբ:

ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում գործարկվել են գինու գործարանը և Գինու ուսումնագիտական կենտրոնը, որոնք դարձել են դուռ կրթության լավագույն կառույցներ: Այստեղ արտադրվող գինին շատ շուտով դուրս կգա հայրենական շուկա: Գինեգործարանի համար GIZ-ի և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի աջակցությամբ ձեռք են բերվել շուրջ 20 մլն դրամի սարքավորումներ:

Համալսարանի տարածքում ուսումնաարտադրական նոր ջերմատան կառուցումը ֆինանսավորվել է Հայաստանում ճապոնիայի դեսպանության դրամաշնորհով (32 մլն դրամ)՝ ICARE հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում: Ջերմատանն օգտագործվելու է «խելացի» կառավարման համակարգ, որը 2019-ին տրամադրել են Թայբեյի Զիաո Թունգ ազգային համալսարանի գործընկերները:

Ավարտվել են Ընդհանուր քիմիայի ամբիոնի 138 քառ.մ ընդհանուր մակերեսով երկու արդիական լաբորատորիաների վերակառուցման և կահավորման աշխատանքները: Լաբորատորիաների արդիականացման աշխատանքներն ավելի քան 11 մլն դրամի չափով համաֆինանսավորել է Զրոնխմետ բարեգործական հիմնադրամը:

ICARE հիմնադրամի աջակցությամբ իրականացված ֆոնդահայթայթման միջոցով հավաքված շուրջ 19 մլն դրամն ուղղվել է ՀԱԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնի վերակառուցմանն ու վերազինմանը: Կենտրոնը բաղկացած է 96 համակարգիչ ունեցող չորս լաբորատորիաներից:

Շեն ՀԿ-ն ՀԱԱՀ-ին նվիրաբերել է Ակունք համայնքում գտնվող 6,2 հա տարածքով Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական կենտրոնը՝ ուսումնական մասնաշենքով, շարժական ջերմոցով, չորանոցով, գյուղատնտեսական տեխնիկայով:

2019-ին Ագրարային համալսարանում հիմնվեց երկրում առաջին Ագրոտեխնոլոգիաների ինկուբատորը՝ ICARE-ի, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և Nation in Action կրթաձեռնարկչական հարթակի ռազմավարական գործակցությամբ: Նախագծի առաջին փուլով ստացվել է մոտ 24 մլն դրամ գումար՝ «open space» ոճի սենյակի վերանորոգման, դասընթացների կազմակերպման և ստարտափային թիմերի ձևավորման համար: 2019 թ. աշնանը մեկնարկեցին դասընթացները, դեկտեմբերին տեղի ունեցավ ստարտափերի առաջին մրցույթը: Նախագծեր ներկայացրած 16 թիմերից 4-ն արժանացան դրամական մրցանակների:

Վերանորոգվել է Սնդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների բաժնի ավելի քան 100 քառ.մ մակերեսով լաբորատորիան:

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում շահագործման է հանձնվել կաթի վերամշակման ուսումնափորձնական լաբորատորիա՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում Սյունիքի մարզում» նախագծի հետ համատեղ:

Կառուցված լաբորատորիաներին կավելանան սննդի անվտանգության (ծեռք կբերվեն մոտ 25 մլն դրամի սարքավորումներ) և օրգանական գյուղատնտեսության (ծեռք կբերվեն մոտ 18 մլն դրամի սարքավորումներ) լաբորատորիաները՝ Էրասմուս+ ծրագրի աջակցությամբ իրականացվող Abionet նախագծի և Վիեննայի BOKU համալսարանի հետ համատեղ իրականացվող Օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում:

Ոսկեհատի տնտեսությունում 2 հա հատկացվել է նորարարական փորձացուցադրական մշակության տեխնոլոգիաների ցուցադրման համար: Նախագիծն իրականացվելու է Հայաստանում Արգենտինայի դեսպանության, Արգենտինայի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի աջակցությամբ և Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսավորմամբ: Առաջիկայում կմեկնարկեն կաթիլային ոռոգման համակարգի անցկացման և ջրավազանի կառուցման աշխատանքները:

Տարին արգասաբեր էր նաև համալսարանի միջազգային գործակցության ընդլայնման ու խորացման առումով:

Համալսարանը արտերկրի տարբեր բուհերի, միջազգային, ինչպես նաև 40 տեղական կազմակերպությունների հետ կնքել է համագործակցության 13 հուշագիր:

ՀԱԱՀ-ում դասախոսություններով հանդես են եկել եվրոպական տարբեր երկրների համալսարանների 39 դասախոսներ:

Միջազգային գործակցության կարևորագույն ծրագրերից է Վայիենշտեֆան-Թրիստորֆի կիրառական գիտությունների համալսարանի հետ համատեղ իրականացվող Ագրարային մենեջմենթ մագիստրոսական ծրագիրը, որի շրջանակում 2019-ին ստորագրվել է կրկնակի դիպլոմ տալու վերաբերյալ հուշագիր:

Եվրոպական 23 համալսարանների, Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագրի, DAAD-ի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում միջազգային շարժունության ծրագրերի և միջազգային վերապատրաստումների են մասնակցել ՀԱԱՀ-ի 63 ուսանող և 125 աշխատակից:

Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի (BOKU) հետ իրականացվող «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» նախագծի շրջանակում ավարտին է հասցվել Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանի մշակումը: Ծրագիրը կմեկնարկի 2020-2021 ուսումնական տարում:

2020 թ. հոբեյանական է Ագրարային համալսարանի համար. լրանում է համալսարանի հիմնադրման 90-ամյակը: Տարվա ընթացքում նախատեսվում են հոբեյանական բազմաթիվ միջոցառումներ՝ գիտաժողովներ, համագործակցության նոր պայմանագրեր, ուսանողական տարաբնույթ միջոցառումներ: Եվրոպական ևս մեկ համալսարանի հետ կստորագրվի կրկնակի դիպլոմի շնորհման վերաբերյալ հուշագիր: Հաջորդաբար կգործարկվեն վերակառուցված-վերանորոգված մի շարք ուսումնագիտական և արտադրական երթակառույցներ, որոնք կհագեցվեն նորագույն տեխնոլոգիաներով, կմեկնարկեն նորերը: Կակտիվացվեն գործնական հարաբերությունները ագրարային կրթության շահակիցների լայն հանրության հետ՝ սկսած մասնագիտական կողմնորոշման շեմին գտնվող դպրոցականներից մինչև ֆերմերներ, պետական ու մասնավոր հատվածների խաղորդներից մինչև լրագրողական հանրություն:


Ակնկալում ենք, որ 2020 թ. Ագրարային համալսարանն ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի վերափոխման առումով բեկումնային կլինի:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2018-2019 ուսումնական տարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ըստ ամբիոնների կողմից ներկայացված և գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, սահմանված ժամկետների, առարկայական ծրագրերի բովանդակությանը և օրացուցային պլաններին համապատասխան:

Բուհում իրականացվող գիտական և ուսումնական աշխատանքների, ուսումնական գործընթացի կազմակերպմանը մասնակցել են պատասխանատու բոլոր ստորաբաժանումները:

Համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության (լսարանային և արտալսարանային, խորհրդատվություններին, պրակտիկաներին, քննություններին, ստուգարքներին, կուրսային, դիպլոմային աշխատանքներին մագիստրոսական թեզերի ղեկավարմանը հատկացվող ժամեր) հաշվարկումը և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը կատարվել է հաստատված չափորոշիչներին համապատասխան: Ըստ ֆակուլտետների ձևավորվել են հետևյալ դրույքաչափերը (նկ. 1), որոնք իրացվել են բոլոր ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ լրիվ կամ մասնակի (երեք քառորդ, կես, քառորդ, համատեղության կամ ժամավճարային կարգով) ծանրաբեռնվածությամբ¹:



Նկ. 1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության դրույքաչափերն ըստ ֆակուլտետների:

ՀԱԱՀ-ի և մասնաճյուղերի բոլոր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում (սաև ներառված է համեմատական տեղեկատվություն Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, ինչպես նաև տեղափոխությունների, հեռացումների, ազատումների և վերականգնումների վերաբերյալ)։


¹ Տվյալները ներկայացված են միջինացված՝ 850 ժ≈1 դրույք հաշվարկի արդյունքում:

**ՀԱԱՀ-ում և մասնաճյուղերում բոլոր կրթական ծրագրերով ուսումնառողների թիվը
(31.12.2018-31.12.2019 թթ. ժամանակահատվածի համար)**


Հ/հ	Ուսուցման ձևը	Ուսանողների թիվն առ 31.12.2018 թ.		Ընդունելություն	Վերականգնում	Տեղափոխություն				Շրջանավարտ	Դեռացում (ազատում)	Ուսանողների թիվն առ 31.12.2019 թ.	
		գործող	տարկետ- ման մեջ գտնվող			այլ բուհից	այլ մասնագի- տությունից	այլ բուհ	այլ մասնագի- տություն			գործող	տարկետման մեջ գտնվող
1	Առկա (բակալավր)	2480	555	444	17	1	54	10	251	504	146	2085	538
2	Հեռակա (բակալավր)	4275	454	520	259	2	303	1	2	300	111 9	3937	351
3	Մագիստրատուրա	187	28	245	15		1		1	131	31	285	24
4	Ասպիրանտուրա	63	1	6						12	22	35	0
5	Ա.Քոչինյանի անվ. քոլեջ	492	34	200	3					93	65	537	31
6	Վանաձորի մասնաճյուղ	334	39	59	4		1			25	18	355	33
7	Սիսիանի մասնաճյուղ	188	15	23	9		1			23	30	168	10
	Սիսիանի մասն. քոլեջ											20	0
8	Շիրակի գյուղ. քոլեջ	142	10	56	4					52	30	120	9
9	Վարժարան	322		213		31				95	97	374	
	Ընդամենը	8483	1136	1687	311	34	360	11	254	1235	1558	7916	996

Բակալավրի առկա ուսուցման համակարգում սովորող և տարկետման մեջ գտնվող ուսանողների թիվը ներկայացված է նկարներ 2 և 3-ում:

ՀԱՍՅ առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն ըստ ֆակուլտետների




Նկ. 2. Գործող ուսանողների թիվն առ 31.12.2019 թ.:



Նկ. 3. Տարկետման մեջ գտնվող ուսանողների թիվն առ 31.12.2019 թ.:

2019-2020 ուսումնական տարվա **առկա** ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով **ընդունելությունն** իրականացվել է համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված տեղերի, քննությունների և ուսման վարձավճարների չափի՝ նախատեսված ժամկետներում (նկ. 4):



Նկ. 4. 2019-2020 ուսումնական տարվա առկա բակալավրիատի ընդունելությունն ըստ ֆակուլտետների:

Ըստ կրթական ծրագրերի՝ առավել շատ ընդունելություն եղել է հետևյալ բաժիններում.

1. Խմորման արտ. տեխնոլոգիա և գինեգործություն՝ 57 ուսանող ($\approx 12,8 \%$):
2. Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա՝ 37 ուսանող ($\approx 8,3 \%$):
3. Գյուղ. հումքի և պարեն. արտ. փորձ. ստանդ. և սերտիֆիկացում՝ 35 ուսանող ($\approx 7,9 \%$):
4. Անասնաբուծություն՝ 31 ուսանող ($\approx 7 \%$):
5. Մսի և մսամթերքի տեխնոլոգիա՝ 28 ուսանող ($\approx 6,3 \%$):
6. Գյուղ. մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ՝ 26 ուսանող ($\approx 5,9 \%$):


Բուհում թափուր մասնագիտություններ չեն եղել, սակայն կան որոշակի կրթական ծրագրեր, որոնցում ընդունվողների քանակը չի գերազանցել 5-ը: Դրանք են՝

1. Բույսերի պաշտպանություն՝ 4 ուսանող:
2. Ձկան և ձկնամթ. տեխնոլոգիա՝ 1 ուսանող:
3. Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա՝ 5 ուսանող:
4. Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա՝ 4 ուսանող:
5. Գյուղ. կենդ. սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա՝ 1 ուսանող:
6. * Հաշվապահական հաշվառում և հարկում՝ 2 ուսանող²:
7. * Ապահովագրական գործ՝ 3 ուսանող:
8. * Ֆինանսներ՝ 1 ուսանող:
9. * Հողաշինարարություն, հողային կադաստր՝ 5 ուսանող:
10. * Փոխադրում. և ճանապարհ. երթևեկուղ. կազմակ. և կառավ.՝ 4 ուսանող :

Ուսանողների գիտելիքների ստուգումը հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է սահմանված ժամկետներում: Միջանկյալ քննությունները, ստուգարքները,

² **Ծանոթություն.** *-ով նշված կրթական ծրագրերում ընդունելությունն իրականացվել է **առնվազն մեկ** միասնական քննություն հանձնելով:

ամփոփիչ քննությունները, կուրսային և անհատական աշխատանքների հանձնումը, դիպլոմային նախագծերի և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կազմակերպվել են նախատեսված ժամկետներում և պահանջվող ձևաչափերով: Նկար 5-ում ներկայացված են միջին գնահատականներն ըստ կիսամյակների և ֆակուլտետների:



Նկ. 5. Ուսանողների առաջադիմության ամփոփ արդյունքները 2018-2019 ուսումնական տարում:

Ուշադրության կենտրոնում է եղել դիպլոմային աշխատանքների բովանդակությունների ստուգումը. կրկնությունները և արտագրությունները բացահայտելու և դրանք կանխելու նպատակով բուհում ստեղծվել է հատուկ հանձնաժողով:

Առկա որոշ թերությունների և հանձնաժողովի աշխատանքների արդյունքների վերաբերյալ տեղեկացվել են բոլոր պատասխանատու ստորաբաժանումները: Նկատված թերությունները վերացնելու համար տրվել է խիստ հանձնարարական:

Հաշվետու ժամանակահատվածում բուհի միջոցների հաշվին իրականացվել են ուսման վարձավճարների 20-100 % գեղչեր՝ հետևյալ կատեգորիաներով.


- բարձր առաջադիմություն,
- միակողմանի կամ երկկողմանի ծնողագուրկ, հաշմանդամ ծնող ունեցող,
- ապրիլյան պատերազմի ընթացքում մարտական հերթապահություն կամ գործողություն իրականացրած,
- մեկ ընտանիքից երկու և ավելի վճարովի համակարգում սովորող,
- մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կամ երկու և ավելի անչափահաս երեխաներ ունեցող,
- սոցիալապես անապահով,
- ավարտական կուրսի ուսանողներ և այլն:

Առաջին կիսամյակում գեղչվել է բուհի և մասնաճյուղերի **163** ուսանողի վարձավճարը՝ ընդամենը **12 593 500** դրամ, երկրորդ կիսամյակում՝ **1 059** ուսանողի՝ ընդամենը **87 117 400** դրամ, երկու կիսամյակում՝ **1 222** ուսանողի՝ ընդամենը՝ **99 710 900** դրամ (աղ. 2):

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ՀԱԱՀ ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը բուհի միջոցների հաշվին

		1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ
1	Ագրոնոմիական	966500	2100500
2	Ագրարային ճարտարագիտության	2049500	3508750
3	Ագրոբիզնեսի և տնտեսագիտության	5407000	13288900
4	Պարենամթերքի տեխնոլոգիաների	1603000	4556000
5	Անասն. բժշկ. և անասնաբուծ.	989000	869000
6	Ագրոբիզնեսի դեպարտամենտ	472500	485000
7	Հեռակա	-	57576000
8	Մագիստրատուրա	405000	832500
9	Ա. Քոչինյանի անվ. քոլեջ	196000	90000
10	Սիսիանի մասնաճյուղ	-	2051000
11	Վանաձորի մասնաճյուղ	505000	1696000
12	Շիրակի Մ. Թումանյանի անվ. քոլեջ	-	63750
	Ընդամենը	12593500	87117400
			99710900

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, բացի ՀՀ քաղաքացիներից, ուսումնառում են նաև սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողներ:




Նկ. 6. Սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողների թիվը:

Ըստ Նկար 6-ում ներկայացված տվյալների՝ սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողների 57,3 %-ը Վրաստանից են, 27,9 %-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, մյուսները՝ այլ երկրներից:

ՀԱԱՀ լեզվի ուսուցման կենտրոնում 2018-2019 ուսումնական տարում օտար լեզվի դասընթացներ են իրականացվել ուսանողների և բուհի անձնակազմի համար (Նկ. 8):

Դասընթացները կազմակերպվել են տեխնիկապես հագեցած լսարաններում, շաբաթական երեք անգամ հաճախականությամբ՝ աշխատակիցների համար՝ 90 րոպե, ուսանողների համար՝ 60 րոպե տևողությամբ:

Դասերը կազմակերպվել են փուլերով, որոնց ավարտին կատարվել է գիտելիքների ստուգում և տրվել են համապատասխան վկայագրեր. 1-ին փուլի համար՝ 120 մասնակից, 2-րդ փուլի համար՝ 93 մասնակից, 3-րդ փուլի համար՝ 37 մասնակից պրոֆեսորադասախոսական և ուսումնառժանդակ կազմից և 51 ուսանող:



Նկ. 7. 2018-2019 ուսումնական տարում Լեզվի ուսուցման կենտրոնի դասընթացների մասնակիցները:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՈՂՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՒՆՈՒՄ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՈՂՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՒՆՈՒՄ 13 մասնագիտությունների գծով գործում է ուսուցման առկա ձևը: 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ քոլեջում ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 458 ուսանող, որից 30-ը՝ վճարովի հիմունքներով:

Այլ ուսումնական հաստատություններից քոլեջ է տեղափոխվել 3 ուսանող, 5 ուսանող ընտանեկան պայմանների պատճառով ազատվել է, իսկ 12-ը՝ հեռացվել անհարգելի բացակայությունների համար:

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նախորդ տարվա համեմատությամբ անհարգելի բացակայությունները նվազել են 25 %-ով:

Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 103 ուսանողներից քննություններին մասնակցել է 102 ուսանող, 1 ուսանող մեկնել է պարտադիր զինվորական ծառայության: 2-րդ պետական ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներով գյուղատնտեսական քոլեջն ունեցել է 80 շրջանավարտ, այդ թվում՝ 15-ը ստացել է գերազանցության դիպլոմ:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՈՂՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՒՆՈՒՄ 35 ուսանող:

2019-2020 ուսումնական տարում ընդունվել է 200 ուսանող, որից մեկը՝ վճարովի հիմունքներով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՈՂՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՒՆՈՒՄ ԿԱՐԺԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՈՂՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՒՆՈՒՄ 2019-2020 ուսումնական տարում ունեցել է աննախադեպ ընդունելություն, մասնավորապես՝ 225 աշակերտ ընդունվել է 10-րդ դասարան: Ներկայումս վարժարանում սովորում է մոտ 400 աշակերտ:

2019 թ. վարժարանում իրականացվել է 10-12-րդ դասարաններում ուսումնական պլանով նախատեսված բոլոր հանրակրթական առարկաների ուսուցումը: 2019-2020 ուսումնական տարում վարժարանն ունեցել է 27 հիմնական և 14 համատեղությամբ աշխատող աշխատակիցներ, ովքեր տարվա ընթացքում մասնակցել են տարբեր վերապատրաստումների և դասընթացների: 2019-2020 ուսումնական տարում վարժարանում փոխվել են ուսումնական պլանները և առավել համապատասխանեցվել հոսքային պահանջներին:

2019 թ. ողջ ընթացքում կատարվել է աշակերտների հաճախումների ամենօրյա հաշվառում: Հաշվառման արդյունքում գրանցվել է միջինը 90 % հաճախելիություն:

Կազմակերպվել են 27 միջոցառում, առարկայական բաց դասեր, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման նպատակով իրազեկումներ և այցելություններ տարբեր մշակութային հաստատություններ:

Վարժարանն ավարտած 95 շրջանավարտներից ավելի քան 70 %-ն ընդունվել է ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՈՂՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՒՆՈՒՄ:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

ՀԱՍՅ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2019 թ. դեկտեմբերի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 358, որից 33-ը մեկնել է գինվորական ծառայության: Տարվա ընթացքում մայր բուհից մասնաճյուղ է տեղափոխվել 1 ուսանող, մասնաճյուղից հեռացվել է 14 ուսանող: 2019 թ. հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս է ընդունվել 58 ուսանող:

Հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հողաշինարարություն և հողային կադաստր», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսության մեքենայացում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտությունների գծով 31 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր բուհի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

Ստուգողական և կուրսային աշխատանքների նախապատրաստման համար ուսանողներն օգտվել են մասնաճյուղի գրադարան-ընթերցասրահից և էլեկտրոնային գրադարանից: Գրադարանում առկա է մոտ 3816 մասնագիտական գրականություն: 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել է 89 դասախոս, այդ թվում՝ 47-ը Վանաձոր են գործուղվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, 3-ը մասնաճյուղի հաստիքային աշխատողներ են, իսկ 39-ը՝ Վանաձոր քաղաքում գործող պետական բուհերից, հանրակրթական դպրոցներից և այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ: Դասավանդող 89 դասախոսներից 46-ը (51,68 %) ունեն գիտական կոչումներ և աստիճաններ:

Մասնաճյուղում ամենօրյա ուշադրության կենտրոնում են կրթության որակի ապահովման և վերահսկողության իրականացման, երիտասարդ դասախոսական կադրերի վերապատրաստման հարցերը: 6 երիտասարդ ասիստենտներ ՀԱՍՅ-ում մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացների և ստացել համապատասխան հավաստագրեր: Տարվա ընթացքում մասնաճյուղի դասախոսների կողմից կազմվել և տպագրվել է 2 մեթոդական ցուցում: Հայաստանի և արտասահմանյան տարբեր ամսագրերում տպագրվել է 2 մասնագիտական հոդված, առաջավոր փորձի ներդրման վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

Բարձրագույն կրթական ծրագրերին զուգահեռ մասնաճյուղում իրականացվել են նաև առանձին թեմաներով գիտական հետազոտություններ: Շարունակական աշխատանքներ են կատարվում մասնաճյուղի ուսումնական բազան հարստացնելու, լաբորատոր սարքավորումներ, նյութեր և գույք ձեռք բերելու ուղղությամբ: Ընթացիկ տարվա նոյեմբեր ամսին մասնաճյուղի արտաբյուջետային միջոցների հաշվին ձեռք են բերվել նոր սերնդի 1 ինտերակտիվ գրատախտակ, համակարգչային տեխնիկա և այլ անհրաժեշտ միջոցներ:

ՀԱՎՅ ՇԻՐԱԿԻ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵԶ-ՄԱՍՆԱԾՅՈՒՂ

ՀԱՎՅ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ-մասնաճյուղում 8 մասնագիտությունների գծով գործում են ուսուցման առկա և հեռակա ձևերը:

Քոլեջում 2019 թ. հունվարի մեկի դրությամբ ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 142 ուսանող (նախորդ տարում՝ 176), որից 7-ը՝ վճարովի, իսկ 3-ը՝ հեռակա ուսուցման համակարգերում:

2019-2020 ուսումնական տարում քոլեջ է ընդունվել 56 դիմորդ (նախորդ ուսումնական տարում՝ 48), որից 4-ը՝ վճարովի ուսուցմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բանակ է զորակոչվել 6 ուսանող, վերականգնվել է 4 ուսանող, որից 2-ը՝ հեռակա բաժին: Հեռակա բաժին է տեղափոխվել 2 ուսանող, հեռացվել՝ 47-ը (նախորդ տարում՝ 53): Ավարտել և որակավորում են ստացել ցերեկային ուսուցման համակարգի 45 ուսանող (նախորդ տարում՝ 59 առկա, 11 հեռակա): 3 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ: Շրջանավարտներից 1-ը (նախորդ տարում՝ 5-ը) չի ներկայացել պետական համալիր քննություններին և հեռացվել է:

Ուսումնական պրակտիկաներն անցկացվել են քոլեջում՝ դասախոսների անմիջական մասնակցությամբ: Արտադրական պրակտիկաները, համաձայն նախապես կնքված պայմանագրերի, կազմակերպվում և անցկացվում են մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպություններում, մասնավորապես՝ «Ախուրյանի Կոոպչին» ՍՊԸ, Ազատանի գյուղապետարան, Գյումրիի «Սելեկցիոն-կայան» ՓԲԸ, «Բելիսսիմո-Գրուպ» ՍՊԸ, «Անուշարան» ՍՊԸ, Շիրակի մարզի «Իգիթ» կաթնամթերքի գործարան ՍՊԸ:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 20 %-ով:

Ուսումնական մոդուլային ծրագրերի իրականացման պահանջներին համապատասխան կարողությունների ապահովման նպատակով կազմակերպվել է դասախոսների կարճաժամկետ վերապատրաստում:

ՀԱՎՅ ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ

ՀԱՎՅ Սիսիանի մասնաճյուղում սկսված բարեփոխումների շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնք միտված են եղել ուսանողների թվի ավելացմանը, պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, ուսումնառության և դասավանդման գործընթացի արդիականացմանը, մասնագիտական կրթության որակի ապահովմանը, ոլորտի գործատուների հետ գործընկերային հարաբերությունների զարգացմանը, մայր բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ակտիվացմանը, նյութատեխնիկական և լաբորատոր բազայի արդիականացմանը, ինչպես նաև բացասական երևույթների դեմ պայքարին:

Մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ գործող «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», «Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա», «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա», «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտությունների գծով 20 կուրսերում

սովորում է 169 ուսանող, այդ թվում՝ 10-ը գտնվում են ակադեմիական արձակուրդում: 2019-ին մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման 1-ին կուրս է ընդունվել 24 ուսանող, մայր բուհից մասնաճյուղ է տեղափոխվել 5 ուսանող, մասնաճյուղից հեռացվել (ազատվել) է 31 ուսանող: 2019-ին մասնաճյուղն ունեցել է 23 շրջանավարտ:

2019 թ. մասնաճյուղին տրվել է միջին մասնագիտական կրթական ծրագրով, հիմնական հանրակրթական հիմքով, առկա ուսուցմամբ մի շարք մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն, իսկ ընդունելության շրջանակներում 20 դիմորդ ընդունվել է անվճար ուսուցման համակարգի 1-ին կուրս՝ «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ (կառավարում)», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտություններով:

Մասնաճյուղում ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկաներն անցկացվել են նախապես կնքված պայմանագրերի հիման վրա: Հաշվետու տարում շուրջ 10 ընկերությունների հետ կնքվել և վերակնքվել են պայմանագրեր: 2019-ին մասնաճյուղի տնօրինության ուշադրության կենտրոնում են եղել նաև ուսումնական լաբորատոր բազայի համալրմանը և ուսուցման որակի բարելավմանն ուղղված հիմնախնդիրները: 2019 թ. նոյեմբերին «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում մասնաճյուղում բացվել է կաթի և կաթնամթերքի ուսումնափորձարարական լաբորատորիա, որը հնարավորություն կտա զարգացնել ուսանողների գործնական ու փորձնական հմտությունները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակ է փոխադրվել երրորդ կուրսի 16 ուսանող: Նույն կուրսի 13 ուսանող Էրասմուս+KA107 ծրագրի շրջանակում մեկնել է եվրոպական տարբեր համալսարաններ՝ 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսումը շարունակելու նպատակով: 2018 թ. համեմատ դեպարտամենտի միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցած ուսանողների թիվը գրեթե կրկնապատկվել է:

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում սովորել է չորրորդ ավարտական կուրսի 21 ուսանող: 2019 թ. մայիսին ավարտական կուրսի 21 ուսանող հաջողությամբ հանձնել է երկու պետական համալիր (ամփոփիչ) քննությունները: Ագրոքիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 20.05.2019 թ. Որոշման համաձայն՝ դեպարտամենտի «Ագրոքիզնես և շուկայաբանություն» մասնագիտության 21 շրջանավարտներին շնորհվել է տնտեսագետ-շուկայագետի որակավորում: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից 1 ուսանողի շնորհվել է գերազանցության դիպլոմ: Ուսանողներին տրվել են նաև Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2019 թ. կենտրոնում անցկացված բակալավրիատի 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա երրորդ կուրսում սովորում է 15 ուսանող, որից 4-ը՝ անվճար համակարգում, իսկ 1-ը՝ արտոնություն ունեցող:

2019 թ. երրորդ կուրսի ուսանողների ամառային արտադրական պրակտիկան անցկացվել է Հայաստանի ագրոքիզնեսի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում: Պրակտիկայի արդյունքներն ամփոփվել են պրակտիկայի հաշվետվության համաժողովի ժամանակ, որտեղ ուսանողները ներկայացրել են աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների համար տարբեր դասախոսություններ և սեմինարներ են անցկացրել նաև հրավիրյալ տեղական ու միջազգային փորձագետներ, այդ թվում՝ ՀԱԱՀ և Շվեդիայի Սյոդերթյորնի համալսարանի միջև համագործակցությամբ իրականացվող Լինեուս-Պալմե Նախագծի շրջանակում Սյոդերթյորնի համալսարանի դասախոս պրոֆեսոր Պաուլինա Րիթկոնենը «Բիզնեսի զարգացումը գյուղացիական տնտեսություններում» թեմայով դասախոսությունների շարք է անցկացրել կենտրոնի ուսանողների համար:

ՀԱԱՀ Ագրոքիզնեսի դեպարտամենտն Ագրոքիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամի հետ համատեղ 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ և 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակներում չորս ամիս տևողությամբ անգլերենի խորացված դասընթաց է կազմակերպել ՀԱԱՀ-ի այն ուսանողների համար, ովքեր ցանկանում են ուսումը շարունակել Ագրոքիզնեսի ուսուցման կենտրոնում:

2019 թ. կենտրոնում կազմակերպվել են վերապատրաստման տարատեսակ կարճաժամկետ դասընթացներ՝ «Նախագծերի կառավարման հիմունքները», «Տնտեսական հարցերի լուծման նպատակով Էկոնոմետրիկ մոդելների կիրառումը STATA-ի օգտագործմամբ», «Քանակական մարկետինգի մոդելներ», «Ձեռնարկատիրական գործունեություն», «Վարքագծային տնտեսագիտություն» թեմաներով: Դասընթացների մասնակիցները 58-ն են եղել, ներառյալ բանկային ոլորտի, ագրոքիզնեսի, ճարտարա-

գիտության, SS, գործարար ոլորտի պատասխանատուներ, խորհրդատուներ և ուսանողներ:

ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)

2018-2019 ուսումնական տարվա սկզբին դեպարտամենտի 1-ին կուրս ընդունված դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ չի փոխվել:

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում Ագրոքիզնեսի մագիստրոսական ծրագրում սովորել են ավարտական կուրսի 9 և առաջին կուրսի 13 ուսանողներ:

2019 թ. մայիսի 21-ին ավարտական կուրսի 9 մագիստրանտները հաջողությամբ պաշտպանեցին մագիստրոսական ավարտական աշխատանքները՝ ստանալով վեց գերազանց և 3 լավ գնահատականներ: 9 շրջանավարտների շնորհվեց տնտեսագիտության մագիստրոսի որակավորում: Շրջանավարտները ստացան ՀԱԱՀ դիպլոմներ և Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2019 թ. հուլիսի 9-ից կազմակերպվել է Ագրոքիզնեսի մագիստրոսական ծրագրի 13 ուսանողների ամառային արտադրական պրակտիկան տասը շաբաթ տևողությամբ: Պրակտիկան անցկացվել է Հայաստանի ագրոքիզնեսի ոլորտի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում, ինչպես օրինակ՝ Ագրոքիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամ, Թուֆենկյան հիմնադրամ-Արցախի գրասենյակ, «Թի Էմ Զի Ընդ Փարթնըրս» ընկերություն, «Ռիլոդ Ֆրեյթ Սիսթեմս» ՍՊԸ, ԻՆԹԵԼԻՆԵՅՐ կազմակերպություն, ԷՅ ԷՆԴ ԷՄ ՖԱՅՆԵՆՇԸ ԶՈՆԱԿԼԹԻՆԳ ՓԲԸ, ԷՅՉԹԻ Էքսպրեսս ՍՊԸ, ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ, «Ամբերդ» հետազոտական կենտրոն: Պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացրել են գրավոր հաշվետվություն:

2019-2020 ուսումնական տարվա առաջին կուրս է ընդունվել 8 ուսանող, որից 4-ը՝ դեպարտամենտի բակալավրիատի 2019 թ. շրջանավարտ: Մագիստրանտներից 4-ն ընդգրկվել են անվճար համակարգում, այդ թվում 1-ը՝ ՀՀ ԿԳՄՍ և Վրաստանի ԿԳՆ միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին հուլիսի 2019 թ. համաձայնագրի:

2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում երկրորդ կուրս է փոխադրվել կուրսի 13 մագիստրանտ, նրանցից 3-ն անձնական դիմումի համաձայն ազատվել են ՀԱԱՀ-ից:

ԻՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ

2019 թվականը ԻՎԻ-ԷՆ գինու ակադեմիայի համար հատկանշական է նրանով, որ, բացի 9 շրջանավարտ ունենալուց, իրականացվել է նաև WINMASTER վերապատրաստման ծրագիրը՝ «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՅԸ) կողմից ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության պատվիրակմամբ: Վերապատրաստման նպատակն էր սիրիահայերի և տեղացիների համար զբաղվածության ու ձեռնարկչության հնարավորություններ ստեղծել գինու արտադրության և բիզնեսի ոլորտներում: Տվյալ ծրագրին դիմորդների քանակը գերազանցում էր 60-ը, սակայն տեղերի սահմանափակ լինելու պատճառով միայն 22-ը հնարավորություն ստացան մասնակցել դասընթացներին: Ծրագրի ավարտին մասնակիցներից 14-ը ստացան հավաստագրեր:

ԻՎԻ-ԷՆ-ի «Գինեգործություն և գինու բիզնես» 18-ամյա մասնագիտական հավաստագրային ծրագրի ընդունելությունն սկսվել է սեպտեմբերին: Անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ 2019 թ. տվյալ ծրագրով հետաքրքրվողների թիվը բավական աճել է, և այս տարի ընդունված ուսանողների թիվը կազմում է 22: Դասընթացները սկսվել են նոյեմբերի 1-ից, և այժմ ուսանողները պատրաստվում են հանձնել իրենց ավարտական քննությունները: Հարկ է նշել նաև, որ ձեռք բերած տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով իրականացվում են այցեր տարբեր գինու գործարաններ և խաղողի այգիներ:

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2019 թ. հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել է 23 մագիստրանտ, որից 11-ը՝ գերմանալեզու, 6-ը՝ հայալեզու կուրսերում, երկրորդ ավարտական կիսամյակում 4 մագիստրանտի տրամադրվել է գործուղում:

2019 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ ծրագրի 7 մագիստրանտի ուսման գործընթացը դադարեցվել է: Սահմանված ժամանակացույցի համաձայն՝ 8 մագիստրանտ պաշտպանել է մագիստրոսական ատենախոսություն: Միջազգային և միջբուհական համագործակցության ծրագրերի շրջանակներում 01.10.2019 թվականից ԱՄՋ-ի լավագույն մագիստրանտներից 7-ն ուսումը շարունակում է Վայիենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում:

2019 թ. գերմաներեն լեզվի նախնական դասընթացներին մասնակցելու հայտ է ներկայացրել 21 ուսանող, սակայն մասնակցել է միայն 7-ը: 2019 թ. ԱՄՋ ծրագրի առաջին կուրս է ընդունվել 13 մագիստրանտ, որից 6-ը՝ անվճար համակարգ, 6 ուսանող գերմանալեզու, 7-ը՝ հայալեզու խմբերում: «Ագրարային մենեջմենթ» ծրագրի ուսանողների ընտրությունը, «Տնտեսագիտական ինֆորմատիկա» առարկայից ինտենսիվ դասերը, «Ագրարային Էկոնոմիկա» և «Բիզնես մենեջմենթ» առարկաներից սեմինարներն անցկացրել են ՎԿԳՀ-ի 2 դասախոս և 3 ուսանող-դասընթացավար: 2019 թ. Տոպաս ծրագրի շրջանակում «Ագրարային մենեջմենթ» ծրագրի 2 աշխատակից և նույն ծրագրի 4 մագիստրանտ վերապատրաստվել են Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում և Ռումինիայում, 2019 թ. ծրագրի մասնագետների համար անցկացվել են նաև մասնագիտական վերապատրաստումներ Գերմանիայի ՎԿԳՀ-ում:

2016 թ. ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիրը ACQUIN հավատարմագրող կազմակերպության կողմից ստացել էր միջազգային հավատարմագրում, որի շնորհիվ 2019 թ. նոյեմբերի 29-ին ՎԿԳՀ-ում կայացած ռեկտորների հանդիպման ժամանակ կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ համաձայնագրի չափանիշներին համապատասխանող «Ագրարային մենեջմենթ» ծրագրի հայ մագիստրանտներին կտրամադրվի կրկնակի դիպլոմ:

ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2018-2019 ուսումնական տարվա գրեթե բոլոր շրջանավարտներն աշխատանքի են անցել ՀՀ և ԳԴ տնտեսության տարբեր բնագավառներում՝ բանկերում, նախարարություններում, կապի և տեղեկատվության, ագրոբիզնեսի ոլորտներում, խորհրդատվական կազմակերպություններում, ինչպես նաև Գերմանիայի խաղողագործական ու խոզաբուծական տնտեսություններում:

«ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ

«Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» դասընթացի նպատակն է՝ պատրաստել փակ գրունտում մշակաբույսերի մշակության ժամանակակից պահանջներին բավարարող, ինչպես նաև շուկայի և կառավարման հիմունքներին ծանոթ մասնագետ-գյուղատնտեսներ:

Դասընթացի 2-րդ փուլին դիմել է 60 դիմորդ, հարցազրույցների փուլից հետո ընդունվել են 20-ը: Դասընթացը հաջողությամբ ավարտել է 19 մասնակից: Ուսանողներն աշխատում են գյուղատնտեսության և հարակից ոլորտներում (ագրարային կրթություն, ջերմատներ, բաց գրունտի մշակություն, գյուղատնտեսական խորհրդատվություն):

Դասընթացի շրջանակում դասավանդել են 8 մասնագետ և 2 հրավիրյալ դասախոս, որոնք բոլորը ջերմատնային ոլորտում աշխատող պրոֆեսիոնալներ են: Դասընթացում ներգրավված են եղել ՀԱԱՀ-ից 1 դասախոս և 2 ուսանող:

Մասնակիցները հնարավորություն են ունեցել մասնագիտական գործնական գիտելիքներ ձեռք բերել Հայաստանում գործող 6 տարբեր ջերմատներում արտադրական պրակտիկա անցնելու շնորհիվ: Առանձին 4 այցելություն է կազմակերպվել Հայաստանում գործող հիդրոպոնիկ ջերմատներ:

Մասնակիցներից 2-ը, դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների շնորհիվ, 2019-ին վերապատրաստվել են Վախենինգենի համալսարանում (Նիդերլանդներ):

Ի նկատի ունենալով «Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» դասընթացի հաջողությունը՝ ՀՀ կառավարության նախաձեռնած «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի» շրջանակում կազմակերպված ուսուցողական կարճաժամկետ դասընթացների անցկացումը վստահվել է ՀԱԱՀ-ի և «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի մասնագետներին: Դասընթացների մեկնարկը կտրվի 2020 թ. հունվարին, ավարտին մասնակիցները կստանան համապատասխան հավաստագրեր:

«ՄՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2019 թ. հունվարին ԱՄՆ ՄԶԳ-ի և ԻննովեՅԹ Հայաստան նախագծի աջակցությամբ ICARE հիմնադրամը Փենսիլվանիայի նահանգային և Վիրջինիա Թեք համալսարանների հետ համատեղ իրականացրել է Սննդի անվտանգության համակարգերի կառավարում մեկամսյա կրթական ծրագիրը:

Դասընթացի նպատակն է միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրի միջոցով ուսանողներին նախապատրաստել ՀՀ պարենային անվտանգության ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը:

Ծրագիրը նախատեսված է Ագրոբիզնեսի դեպարտամենտի բակալավրիատի ուսանողների համար: Ծրագրին մասնակցել են դեպարտամենտի երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողները: Դասընթացը ներառել է «Սննդագիտության ներածություն», «Սանիտարիա և սննդի միկրոկենսաբանություն», «Վերամշակման վերահսկողություն և թթվեցված սննդամթերք», «HACCP համակարգ և սննդի պաշտպանություն» մոդուլները: Կազմակերպվել են գործնական պարապմունքներ և այցելություններ վերամշակող ընկերություններ: Դասընթացը վարել են CARD հիմնադրամի Սննդի անվտանգության դեպարտամենտի դեկավար Չարուհի Դավթյանը և ավագ մասնագետ Սերգեյ Չախմախչյանը:

Ծրագրի շրջանավարտները ստացել են Փենսիլվանիայի նահանգային համալսարանի հավաստագրեր:

«ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՀԵՌԱՅԱՐ ՉՈՆԴԱՎՈՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2019 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացվել է «Աշխարհատեղեկատվական համակարգեր և հեռահար զոնդավորում» երկամսյա հավաստագրային ծրագրի երկրորդ փուլը: Ծրագիրն իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ: Դասընթացի նպատակն էր մասնակիցներին տալ տեսական և գործնական գիտելիքներ աշխարհատեղեկատվական համակարգերի և հեռահար զոնդավորման տեխնոլոգիաների վերաբերյալ և զինել նրանց ArcGIS ծրագրային փաթեթի կիրառման հմտություններով:

Մոդուլները տեսակոնֆերանսային եղանակով դասավանդել են ԱՄՆ Լայքենդ քոլեջի և Կանզասի համալսարանի համալսարանի պրոֆեսոր Մարկ Գիզլոն և Esri ավագ տեխնիկական խորհրդատու պրոֆեսոր Պակրադ Բալաբանյանը:

Ծրագրում ընդգրկվել էր 18 մասնակից, այդ թվում՝ ՀԱՀ-ի դասախոսներ: Ծրագրի ավարտին մասնակիցներից 14-ը ստացել են հավաստագրեր:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԿՈՒՆՔ» ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2019 թվականին Շեն ՀԿ-ի կողմից որպես նվիրատվություն ՀԱՀ-ին անցավ Կոտայքի մարզի Ակունք գյուղում գտնվող 6,2 հա տարածքով այգին և սեմինարների անցկացման կենտրոնը: Նախկինում օրգանական հավաստագրում ստացած այս հողատարածքը ծառայելու է օրգանական գյուղատնտեսություն ուսումնասիրող դասախոսներին և ուսանողներին՝ հնարավորություն ընձեռելով անցկացնել գործնական պարապմունքներ և հետազոտություններ: 2019-ին Ագրարային համալսարանը դիմել է օրգանական հավաստագրման համար:

Տարվա ընթացքում ՀԱԱՀ-ի, ինչպես նաև արտերկրի մասնագետները 6 ճանաչողական այց են կազմակերպել Ակունք՝ պայմաններին ծանոթանալու և ագրոնոմիական աշխատանքների իրականացման պլան մշակելու նպատակով: Այցերին հաջորդել են ինտենսիվ գյուղատնտեսական աշխատանքները՝ վար, փխրեցում և պարարտացում: Տարածքը նախապատրաստվում է գարնանը սպասվող ծառատունկին, բանջարաբուստանային մշակաբույսերի և հատապտուղների մշակությանը. անհրաժեշտ սերմերը, սածիլները և տնկիները ձեռք կբերվեն «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» նախագծի շրջանակում:

Ագրարային համալսարանի ագրոնոմիական ֆակուլտետի դասախոսները 2020 թ. գարնանից կշարունակեն աշխատանքները կենտրոնում՝ հողատարածքը նախապատրաստելու ՀԱԱՀ-ում սեպտեմբերին մեկնարկող «Օրգանական գյուղատնտեսություն» մագիստրոսական ծրագրի համար:

«ԲԱԼԱՀՈՎԻՏ» ՈՒՓՏԱՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի հյուսիսարևելյան մասում տեղակայված «Բալահովիտ» ուսում-նափորձական տնտեսության հիմնական նպատակն ուսանողների համար որպես գիտական, ուսումնական և գործնական-արտադրական բազա ծառայելն է:

«Բալահովիտ» ՈՒՓՏ-ն Ելիջա հանդամասում ներկայումս ունի 1077 հա հողատարածք, որի 500 հա տարածքի վրա 2019 թ. կատարվել են խոտհնձի և խոտհավաքի աշխատանքներ, հարդյունս որի՝ կուտակվել է 423 տ խոտ, հնձվել և տեղափոխվել է 248,0 տ խոտի կանաչ զանգված (որպես սիլոս) և 13,2 տ ծղոտ:

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ Բալահովտի ՈՒՓՏ-ի կաթնասնամապահական ֆերմայի խոշոր եղջերավոր կենդանիների և մատղաշի գլխաքանակը կազմել է 272 գլուխ, 31.12.2019 թ. դրությամբ՝ 189 գլուխ, գլխաքանակի նվազման պատճառը տնտեսության օպտիմալացման նպատակով խոտանված կենդանիների վաճառքն է: Կովկասյան գորշ ցեղատեսակը կփոխարինվի եվրոպական բարձրկաթնատու ցեղատեսակով, իսկ կիսաքանդ անասնաշենքը ապամոնտաժվել է՝ նոր, «խելացի» անասնաշենքերի կառուցման նպատակով: Չուգահեռաբար պլանավորվում է կառուցել հիդրոպոնիկ կանաչ կերի արտադրամաս, ինչպես նաև համակցված կերատեսակների, կենդանիների կենսագործունեության արդյունքներից ստացվող պարարտանյութի և վառելանյութի արտադրամասեր: Որպես արդյունք՝ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ում կունենանք անթափոն արտադրություն:

Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 271 գլուխ, 31.12.2019 թ. դրությամբ՝ 182 գլուխ, պլանավորվում է համալրում անգլիական նոր ցեղատեսակով: Խոզերի գլխաքանակը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 23 գլուխ, 31.12.2019 թ. դրությամբ՝ 30 գլուխ: Վաճառվել է 89 գլուխ գառ և 550 կգ բուրդ:

2019-ին արտադրվել է 176,9 տ կաթ, որից 77,8 տ վերամշակվել է կաթնամթերքի ուսումնական արտադրամասում, մնացածն իրացվել է:

Բալահովիտ ՈՒՓՏ-ում ուսումնական, արտադրական, նախադիպլոմային փորձուսուցումներ են անցել ՀԱԱՀ-ի բոլոր ֆակուլտետների բակալավրիատի, մագիստրատուրայի, նաև քոլեջի և հեռակա ուսուցման դեպարտամենտի 150 ուսանողներ: Տնտեսության տարածքում կառուցվել է պոլիգոն, որտեղ ագրարային ճարտարագիտության տարբեր մասնագիտությունների ուսանողները սովորում են գյուղտնիկական աշխատանքի նրբությունները:

«ՈՍԿԵՀԱՏ» ՈՒՄՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2019 թվականին «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում մշակվել են 4 հա նորատունկ և 8 հա բերքատու խաղողի այգիներ, որտեղից հավաքվել է Հաղթանակ, Չարենցի, Կանգուն սորտերի 53860 կգ խաղող: 2019-ին տնտեսությունում մշակվել է նաև նախկին արևային ջերմոցների 3,8 հա տարածքում գտնվող ծիրանենու բերքատու 1,5 հա ոչ լիարժեք այգին, որտեղից հավաքվել է 7400 կգ ծիրան: Բերքահավաքի աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ագրոնոմիական և պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետների ուսանողները:

2019 թ. Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության հետազոտական կենտրոնի հետ համագործակցության շրջանակում նախկին արևային ջերմոցների տարածքում դրվել է գիտափորձ և տարբեր պարարտանյութերի կիրառմամբ ուսումնասիրվել են լուլիկի ու տաքդեղի աճեցողության առանձնահատկությունները: ՀԱԱՀ «Ոսկեհատի խաղողագիտագործության գիտական կենտրոն» մասնաճյուղի հետ համագործակցության շրջանակում արտադրվել է խաղողի ավելի քան 10000 տնկանյութ, որն աշնանը վաճառվել է մասնավոր հատվածին:

ՈՍԿԵՀԱՏԻ ԳԻՆՈՒ ՈՒՄՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2019 թվականին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը մթերել է 53860 կգ խաղող, որից 9500 կգ՝ սեփական գինու արտադրության համար, իսկ մնացածը՝ վճարովի գինեգործական ծառայությունների մատուցման պայմանագրերով «Վայն Ֆորմուլա», «Շիրակամուտ», «Պռոշյանի կոնյակի գործարան», «Զի Էն Վայնլըի» ՍՊԸ-ների համար գինի պատրաստելու նպատակով:

2019 թ. սեպտեմբերից կենտրոնը «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության» (GIZ) հետ համագործակցության շրջանակում իրականացնում է սիրիահայերի ինտեգրման ծրագիր, որի մասնակիցները ստանում են ժամանակակից տեսական և գործնական գիտելիքներ: Ծրագրի 6 մասնակիցների համար պատրաստվում են 6 տարբեր տեսակի գինիներ:

Տարվա ընթացքում կենտրոնը շարունակել է սերտորեն համագործակցել Ի-ՎԻ-ԷՆ գինու ակադեմիայի հետ՝ տրամադրելով արտադրական տարածք, գինեգործական ծառայությունների մատուցում և ուսանողների արտադրական փորձուսուցումների իրականացման հնարավորություն: Որպես արդյունք՝ կենտրոնում ուսանողների ակտիվ մասնակցությամբ պատրաստվել են գինիներ:

2019-ին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի մասնագետների ղեկավարությամբ և ագրարային համալսարանի 3 մագիստրանտների մասնակցությամբ կենտրոնում իրականացվել են մի շարք գիտափորձեր ու հետազոտություններ, որոնց արդյունքները շուտով կտպագրվեն միջազգային գիտական պարբերականներում:

Կենտրոնի բոլոր ծրագրերին և գործընթացներին ակտիվ մասնակցություն են ունեցել թե՛ Ագրարային համալսարանի ագրոնոմիական և տեխնոլոգիական մասնագիտությունների ուսանողները, թե՛ համագործակցող կրթական հաստատությունների համապատասխան բաժինների ուսանողադասախոսական կազմը:

Կենտրոնում աշխատում է ՀԱԱՀ-ի մագիստրատուրայի 2 ուսանող, իսկ բակալավրիատի 3 ուսանող կատարել է վճարովի սեզոնային աշխատանք:

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2019 թ. ՀԱԱՀ որակի գնահատման և ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ՈԳԱ կենտրոն) որակի ներքին ապահովման նոր համակարգի ներդրման նպատակով իրականացրել է համալսարանի գործող համակարգի գնահատում, վեր է հանել գործող գործիքակազմի, մեխանիզմների, փաստաթղթային հենքի կիրառության խնդիրները, և, հիմք ընդունելով որակի ներքին ապահովման համակարգում բացահայտված թերացումներն ու համալսարանի կողմից որդեգրված բարեփոխումները, պլանավորել և իրականացնում է որակի ներքին համակարգի վերանայման աշխատանքներ:

Օրացուցային տարվա ընթացքում մշակվել և հաստատվել է ՈԳԱ կենտրոնի կանոնադրությունը, վերանայվում, վերամշակվում և վերահաստատվում են համալսարանում որակի ներքին ապահովման համակարգի հիմք հանդիսացող փաստաթղթեր, մշակվում է ՀԱԱՀ որակի ներքին ապահովման նոր ձեռնարկը, որն իր մեջ ներառում է ՀԱԱՀ որակի ապահովման նոր քաղաքականությունը, ռազմավարությունը և գործիքակազմը, մշակվում և ներդրվում են շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության ապահովման, համալսարանի ներսում ուղղահայաց և հորիզոնական համագործակցության արդյունավետության բարձրացման, գործընթացների թափանցիկության, չափելիության և հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ:

ՈԳԱ կենտրոնն ակտիվորեն իրականացնում է ներհամալսարանական միջավայրում մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրում, շահակիցների կարծիքների, ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրություններ, մասնավորապես՝ ֆոկուս խմբային քննարկումներ և SWOT վերլուծություններ ներքին շահակիցների հետ, պլանավորվում է իրականացնել նաև արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն:

2019 թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակներում իրականացվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն: Ուսումնասիրվել է վերջին 5 տարիների կտրվածքով հավաքագրված տեղեկատվությունը, մշակվել է անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանությունը և փորձ է արվել ըստ ոլորտների դուրս բերել ելակետային տվյալները (baseline): Դեկտեմբերին տեղի է ունեցել փորձագիտական խմբի այցը համալսարան: Այցի ընթացքում կազմակերպվել են դասալսումներ, այցեր ուսումնասիրության տնտեսություններ, հանդիպումներ համալսարանի Հոգաբարձուների խորհրդի անդամների, ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսական անձնակազմի, ուսանողների, վարչական աշխատակիցների, ինչպես նաև արտաքին շահակիցների՝ գործատուների, շրջանավարտների հետ: Հանդիպումներին մասնակցել են նաև Վանաձորի մասնաճյուղի անձնակազմը և ուսանողները: 2020 թ. հունվարին ՈԳԱ-ը կներկայացնի փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որին ի պատասխան՝ ՈԳԱ կենտրոնը մշակելու է ծրագիր՝ զեկույցում առկա թերությունների վերացման ուղղությամբ:

Հիմք ընդունելով որդեգրած բարեփոխման և զարգացման նոր ուղղությունները՝ վերանայվել են համալսարանի տեսլականը, առաքելությունը և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների ու ազգային առաջնահերթությունների իրականացմանը որոշակիորեն նպաստող և նոր որդեգրված տեսլականի ու առաքելության իրագործմանն ուղղված ռազմավարական ծրագիրը (ՌԾ): Մշակված նոր ՌԾ քննարկվել է համալսարանի ներքին շահակիցների շրջանում, և վերջնական տարբերակը ներկայացվելու է Հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

ՈԳԱ կենտրոնը, Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի օրինակով, վերանայել է նաև դասախոսի և առարկայի գնահատման հարցաթերթը և 2018-2019 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակում բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում իրականացրել է քանակական հետազոտություն: Հարցման ընթացքում ընդհանուր առմամբ լրացվել էր 8000 հարցաթերթ, գնահատվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի մոտ 75 և դասավանդվող առարկաների մոտ 55 %-ը: Կատարված հարցումների արդյունքներն ամփոփվել են և մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը անձնական էլ. հասցեներով կտրամադրվեն պրոֆեսորադասախոսական անձնակազմին: Պլանավորվել և իրականացվել է նաև 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասընթացների գնահատումը, որի ընթացքում ընդհանուր առմամբ լրացվել է 2600 հարցաթերթ, գնահատվել են մասնավորապես պրոֆեսորադասախոսական անձնակազմի այն ներկայացուցիչները, ովքեր նախորդ ուսումնական տարում չեն գնահատվել:

ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգում գիտահետազոտական աշխատանքները հիմնականում իրականացվել են 3 գիտական կենտրոնների, 2 գիտահետազոտական ինստիտուտների, 6 հետազոտական կենտրոնների և կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի միջոցով:

Համալսարանի գիտական կառույցների և ստորաբաժանումների՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 236.4 մլն դրամ: Գիտական կենտրոնների արտաբյուջետային մուտքերը կազմել են շուրջ 42 մլն դրամ, որից 14.7 մլն դրամը ֆերմերների հետ համատեղ գիտահետազոտական գործունեությունից, իսկ 5.3 մլն դրամը ֆերմերային տնտեսություններին մատուցված խորհրդատվական ծառայություններից մուտքերն են:

Բացի վերոնշյալից՝ 2019-ին ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում է ստացել 18 ծրագիր՝ շուրջ 56 մլն դրամ ընդհանուր գումարով:

Գիտական հետազոտություններն իրականացվել են ագրոպարենային ոլորտն ընդգրկող 16 կարևորագույն ուղղություններով:

Հրապարակված գիտական հոդվածների և գիտաժողովների զեկույցների թիվը 131 է, որից 90-ը գիտական հոդվածներ են, իսկ 41-ը՝ գիտաժողովների զեկույցներ:

Գիտական գործունեության համառոտ նկարագիրը ներկայացված է ստորև:

Հ/հ	Գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների անվանումը	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը, հազ. դրամ	Հաստիքային միավորումներ	Կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը	Հատարման ժամկետի թիվը	Կոնֆերանսների մասնակցությունը
1	2	3	4	5	6	7
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ						
1	ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ	24764,4	16,5	1. Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացում Կարտոֆիլի չորս սորտի համար իրականացվել է բույսերի ռեգեներացիայի, միկրոբազմացման, մինիպլանտների ստացման տեխնոլոգիաների բարելավում: Աշխատանքներ են տարվել մի շարք արժեքավոր գյուղատնտեսական դեկորատիվ, ծաղկային, դեղատու բույսերի, ինչպես նաև ոչ ավանադական արժեքավոր մշակաբույսերի ռեգեներացման, բազմացման և ադապտացման ուղղությամբ: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ համատեղ սկսվել են կարտոֆիլի 20-ից ավելի սորտերի ադակայունության մոլեկուլային նույնականացման աշխատանքները: 2. Մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենբանկի պահպանում և համալրում ՀՀ տարբեր մարզերից հավաքած բույսերի վայրի ազգակիցների տարբեր տեսակների 30 նմուշ դրվել է Ex situ երկարատև պահպանության: Պատրաստվել է 25 հերբարիում: Կենտրոնը հարստացվել է նաև Նիդերլանդների Վագենինգենի համալսարանի կողմից ուղարկված կաթնուկի 29 և Խորվաթիայի Osijekի համալսարանից ստացված ցորենի 50 նմուշներով: Շարունակվել է համագործակցությունը տեղական և արտասահմանյան մի շարք գիտական կազմակերպությունների հետ:	8	6

1	2	3	4	5	6	7
2	ՈՍԿԵՀԱՏԻ ԽԱՂՈՂԱԳԻՆԵ- ԳՈՐԾՈՒԹՅԱՆ	37608,0	15 հիմնա- կան, 8 սեզո- նային	1. Խաղողագործություն ՀԱԱՀ Ոսկեհատի գիտափորձարարական տնտեսությունում հիմնվել է խաղողի 4 սորտերի (Ոսկեհատ, Կախեթ, Հաղթանակ, Այվազյանի վարդաբույր) ներգրավմամբ տնկարան: Ստացվել է շուրջ 9500 արմատակալ, որից մոտ 7000 իրացվել է, մնացածը կվերատնկվեն տնկարանում գարնանը: Խաղողի գենետիկական ռեսուրսների հավաքագրման և կոլեկցիոն այգիների համալրման նպատակով գիտարշավային հետազոտություններ են իրականացվել հանրապետության մի շարք մարզերում: Հայտաբերվել են անհետացած համարվող և անհայտ (դեռևս չնկարագրված) սորտեր և որոշ սորտերի կլոններ: Գիտարշավային հետազոտությունների ընթացքում հավաքագրված ամբողջ նյութն այժմ գենետիկական ուսումնասիրություններ է անցում Գերմանիայում (Julios Kühn Institute): 2. Պտղաբուծություն Վեգետացիայի ընթացքում հիմնական պտղատեսակների նկատմամբ իրականացվել են ֆենոլոգիական դիտումներ: Տնկարանի հիմնման նպատակով Նալբանդյանի գիտափորձարարական տնտեսությունում կատարվել է տարբեր պտղատեսակների մոտ 12 կգ սերմերի ցանք, պտղատու կուլտուրաների ցածրած պատվաստակալների ծիրանենու, սալորենու, դեղձենու, ինչպես նաև անփուշ մոշենու կտրոններով տնկարանի հիմնում: 3. Գինեգործություն Միկրոգինեգործության մեթոդով ուսումնասիրություններ են իրականացվել խաղողի աբորիգեն և սելեկցիոն տեխնիկական մի շարք սորտերի ու կլոնների գինեկոթերի որակների պարզաբանման ուղղությամբ: Հրատարակել է 1 գործնական ձեռնարկ՝ «Ամպելոգրաֆիա»:	3	5

1	2	3	4	5	6	7
3	Հ. ՊԵՏՐՈ- ՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՂԱ- ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵ- ԼԻՈՐԱՑԻԱՅԻ	89417,0	57 հիմնա- կան, 15 սեզո- նային	1. Հայաստանի հողային ծածկույթում ընթացող բացասական երևույթների բացահայտման նպատակով ուսումնասիրվել են տարբեր հողակլիմայական պայմաններում հողում հումուսի պարունակությունը, հողերի մեխանիկական կազմը, հողի կլանող կոմպլեքսում կալցիումի պարունակությունը, հողի ծավալային կշիռը, ծակոտկենությունը, մշակվել է առաջարկությունների և հողերի արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների փաթեթ: 2. Իրականացվել են նաև հողում երոզիոն երևույթների, հողերի առաջնային և կրկնակի աղակալման երևույթների ուսումնասիրություններ, մշակվել են հողում հակաերոզիոն, հողերի աղակալման և կրկնակի աղակալման երևույթների դեմ միջոցառումների համակարգեր: 3. Մշակվել են հակաերոզիոն ցանքաշրջանառություններ, որոնք ներառում են նոր մշակաբույսեր՝ հողերի բերրիության մակարդակի բարձրացումը և որակի բարելավումն ապահովելու համար: 4. Իրականացվել են նաև ուսումնասիրություններ բնության մեջ հող-բույս էկոհամակարգի ուղղությամբ: 5. Աշխատանքներ են իրականացվել մասնաճյուղի Երասխահունի փորձամեյիորատիվ կայանում մեյիորացված հողերում բազմամյա տնկարկների, ինչպես նաև եգիպտացորենի, ցորենի լայնաշար և ավանդական մշակման ուղղություններով: 6. Սկսվել և շարունակում է իրականացվել ֆերմերային տնտեսության վարման արդյունավետության փորձարարական ուսումնասիրություն՝ ֆերմերի անմիջական մասնակցությամբ: 2019 թ. ընթացքում իրականացվելու է թեմատիկ ֆինանսավորման 3 գիտահետազոտական թեմա:	15	6

1	2	3	4	5	6	7
	ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ					
4	ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ՄԵՔԵ- ՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑ- ՄԱՆ	16649,64	14,25	Դաշտավարության մեքենայացման բաժին 2019 թ. կատարվել են երեք տարբեր ուղղություններով աշխատանքներ. 1. Հացահատիկային շարքացանների ունիվերսալացում՝ ցանող ապարատի և շաղացանքի սերմթաղիչ հանգույցի մշակումով: 2. Հողի ֆիզիկատեխնոլոգիական հատկությունների հետազոտում և պարամետրերի որոշում: 3. Ակտիվ գործողության ունիվերսալ կոշտաջարդիչի մշակում Բաժնում կատարվում են նաև ՀՀ ԳԿ կողմից ֆինանսավորվող երեք դրամաշնորհային ծրագրեր (թեմատիկ և երիտասարդ գիտնականների հետազոտական ծրագրերը): Վերջիններս ուղղված են ինտենսիվ այգիների լիակատար հողամշակման մեքենայի պատրաստմանը, հողի ֆիզիկատեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրությանը և սայրով բույսերի վիբրոկտրման գործընթացի մոդելավորմանը:	7 հոդ- ված և 1 արտո- նագիր	1
				Անասնապահության և կերարտադրության մեքենայացման բաժին Մշակվել է կապովի պահվածքով անասնաշենքի Եսքիզային հատակագծերը 10 ու 24 կովերի հաշվով, ինչպես նաև նախագծվել է անթափոն տեխնոլոգիաներով և համալիր մեքենայացված կաթնապարանքային ֆերմայի Եսքիզային գլխավոր պլանը: Արտադրական գործունեությունից ելնելով՝ կատարվել է համապատասխան պահեստարանների ու արտադրամասերի անհրաժեշտության վերլուծություն, մեկը մյուսով փոխարինելու տնտեսական արդյունավետության հաշվարկներ: Վերահաշվարկելուց, լրացուցիչ գիտաարտադրական փորձերից հետո օպտիմալացվել և օգտագործվել են վերջին 10 տարիների ընթացքում բաժնի կողմից կատարված գիտահետազոտական ու կոնստրուկտորանախագծային աշխատանքների արդյունքները:	4 հոդ- ված և 1 ար- տո- նագիր	--

1	2	3	4	5	6	7
				Ավտոմոբիլային փոխադրումների բաժին Ավտոտրանսպորտային փոխադրումների ինքնարժեքի ձևավորման մեջ կարևորագույն նշանակություն ունի վառելանյութի ծախսի ռացիոնալ, ճիշտ որոշումը և նորմավորումը: 2019 թ. ծրագրով նախատեսված էր հետազոտել միջքաղաքային և մերձքաղաքային երթուղիներում ԳԱԶել ընտանիքի միկրոավտոբուսի շարժման ռեժիմների բնութագրերի դիֆերենցումն ըստ շահագործման պայմանների փոփոխության: Դիտարկվել են նաև գերաճախսի պատճառները: Կատարված հետազոտությունների արդյունքներով հաշվարկվել է Երևան-Սևան-Երևան երթուղում գազամոտորային վառելանյութի ծախսը՝ 14,5 մ³/100 կմ:	3	2
5	ՍՆՆԴԱԳԻՏՈՒ-ԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈ-ԼՈԳԻԱՆԵՐԻ	15724,7	13,25	Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի բաժին Կատարվել է Հայաստանի տարբեր բնակլիմայական պայմանների կաթնամթերքից, բուսական ծագման հումքից, բույսերից մեկուսացված կաթնաթթվային բակտերիալ շտամների կենսատեխնոլոգիական, կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրություն: Մշակվել են մերանների, ինչպես նաև կաթ մակարդող ֆերմենտների (շրդանաֆերմենտ, պեպսին, թռչնապեպսին) ստացման օպտիմալ կենսատեխնոլոգիական ցուցանիշները՝ բուսական ծագման հումքից, մթերքից, տարբեր տեսակի բույսերից, բանջարեղենից առանձնացված Էպիֆիտ մանրէների, բիֆիդոբակտերիաների, պրո- և պրեբիոտիկների համատեղ օգտագործմամբ: Ուսումնասիրվել է դրանց ազդեցությունը կաթնամթերքի արտադրության կենսաքիմիական, կենսատեխնոլոգիական գործընթացների, որակի, արդյունավետության վրա: Գիտակիրառական հետազոտությունների արդյունքները ներդրվել են Զաղրաշենի «ԽԱԶ» ՍՊԸ-ում:	-	-

1	2	3	4	5	6	7
				Բուսական ծագման մթերքի և հումքի վերամշակման տեխնոլոգիայի բաժին Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են՝ 1. Ոչ ավանդական հումքատեսակների և տեխնոլոգիական գործընթացների կիրառմամբ հացի, հացաբուլկեղենի և ալյուրյին հրուշակեղենի տեխնոլոգիաների մշակում՝ ա) ֆունկցիոնալ նշանակությամբ թխվածքաբլիթների ստացման տեխնոլոգիա՝ բնական քաղցրացնողների և վայրաճ հատապտուղների օգտագործմամբ, բ) 100 % ոսպի ալյուրից հատակաթուխ հացի տեխնոլոգիայի, գ) եգիպտացորենի պարունակությամբ ալյուրից պատրաստված հացի տեխնոլոգիա: 2. Բուսական ծագման հումքատեսակների չորացումով վերամշակման նորագույն մեթոդների կիրառումով նոր արտադրատեսականու՝ պտուղբանջարեղենային չիպսերի արտադրության տեխնոլոգիայի մշակում՝ առանց բուսական յուղում հումքի տապակման՝ ա) ուսումնասիրվել են պտուղբանջարեղենային չիպսերի խոնավակլանիչ հատկությունները, պահպանության պայմանները, բ) կատարվել են չիպսերի կշիռների փոփոխման դինամիկայի ուսումնասիրման փորձեր:	2	-
				Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին 2019 թ. ուսումնասիրությունների հիմնական նպատակն է եղել Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժնի կողմից անջատված կաթնաթթվային պրոբիոտիկային բակտերիաների 4-20 Gy ռենտգեն ճառագայթումների նկատմամբ հակաօքսիդացիոն ազդեցությունների գնահատումը <i>in vivo</i> պայմաններում: Ըստ հաշվետու ժամանակահատվածում կատարված հետազոտությունների՝ կաթնաթթվային պրոբիոտիկները ճառագայթային թերապիաների կիրառություններում կարող են ունենալ բացասական, չեզոք և դրական ազդեցություններ: Գնահատվել են նաև գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի «ռիսկի գնահատման» ժամանակակից մոտեցումները: Հաստատվել է ֆինանսավորման մեկ միջազգային դրամաշնորհային ծրագիր:	11	2

1	2	3	4	5	6	7
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ						
6	ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻ- ՏՈՒԹՅԱՆ	5477,8	3	Հետազոտական կենտրոնում 2019 թ. իրականացվել է «ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի իրացման, մրցունակության բարձրացման կառուցակարգերի կատարելագործումը և արտահանման ընդլայնման ուղիները» թեման: Հետազոտության արդյունքում մշակվել և առաջադրվել են՝ - գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ իրացման շուկայի մոդելը, կազմակերպարարական կարգավիճակը, հավաքման կետերի տեղաբաշխումը, - ներդրումների ծավալը, ներդրումների հետզևման ժամկետը, - մեծածախ շուկաների գործունեության իրավական ապահովման հիմնական դրույթները, - գյուղատնտեսական արտադրանքի իրացման ոլորտի կարգավորման մեխանիզմները, - մեծածախ բաշխման կենտրոնների կառուցվածքը, մասնակիցները, ծառայությունները, վաճառքի ուղիները, - գյուղատնտեսական արդյունքների արտահանման գործընթացում առաջնային խոչընդոտների և սահմանափակումների ազդեցության գնահատումը, - արտահանման խթանման ծրագրի հայեցակետային հիմնական դրույթները, - ԵԱՏՄ շրջանակներում միջպետական կոոպերացիոն միավորումների ձևավորման ու զարգացման ուղղությունները:	6	4
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱ- ԿԱՆ ԿԵՆՂԱՆԻ- ՆԵՐԻ ՍԵԼԵԿ- ՑԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻ- ԿԱՅԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ	6474,8	6,25	Իրականացրել է տեխնոլոգիական, գենետիկական և կենսաքիմիական հետազոտություններ: Տավարաբուծության ուղղությամբ ՀԱԱՀ Բալախովիտի ուսումնափորձնական տնտեսությունում իրականացվել է բարձրակիթ կովերի աճեցման Նորագույն արագընթաց տեխնոլոգիայով գիտաարտադրական փորձ: Ոչխարաբուծության ուղղությամբ իրականացվել են Նորածին գառների համարակալում, անհատական կշռում և հաշվառում: «Ագրոհոլդինգ» ընկերությունում իրականացվել է 860 գլուխ ոչխարների բռնիտավորում: Կատարվել են արհեստական սերմնավորման նախապատրաստական աշխատանքներ:	7	1

1	2	3	4	5	6	7
				Այծաբուծության ուղղությամբ շարունակվել են Հայաստանում կաթնային այծաբուծության ստեղծման աշխատանքները, ՀՀ Շիրակի մարզի Կրաշենի այծաբուծական տնտեսությունում: Գենետիկական հետազոտության ուղղությամբ ուսումնասիրվել են Չաանենյան ցեղի այծերի արյան և կաթի պոլիմորֆ սպիտակուցների լոկուսները՝ բազմապտղության, կաթի պանրապիտանելիության գենետիկական բնույթը պարզաբանելու և, որպես գենետիկական մարկերներ, ճյուղի սելեկցիոն աշխատանքներում օգտագործելու նպատակով: Կենսաքիմիական հետազոտություն ուղղված է եղել Չաանենյան և տեղական ցեղերի այծերի կաթի հետազոտմանը:		
8	ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ	6474,8	4,25	1. Արշավախմբային ուսումնասիրություններ Կատարվել են Հայաստանի 4 ֆլորիստիկական շրջանների 6 վարչական մարզերում: Ներկայումս պահպանվում է 5556 սերմային նմուշ, 1484 թերթ հերբարիում: Տրվել է ուսումնասիրված տարածքների պոպուլյացիաների վիճակի ընդհանուր բնութագիրը: 2. Սելեկցիոն աշխատանքներ Հացահատիկային և բանջարային բույսերի հեռանկարային սորտերի ու գծերի ստեղծման նպատակով պետական սորտափորձակման են հանձնվել 4, նախապատրաստվում են 3 սորտանմուշ: Բազմացման փուլում է գտնվում 9 սորտանմուշ: 3. Գենետիկական հետազոտություններ Նորվեգիայի (Թրոմսո) Արկտիկական համալսարանի հետ համատեղ շարունակվում են գեների էքսպրեսիայի հետազոտությունները: Հետազոտական կենտրոնի և EURISCO տվյալների բազաներ են ներմուծվել 53 նոր նմուշների անձնագրային տվյալներ: Կենտրոնը շարունակում է համագործակցել միջազգային տարբեր գիտական կենտրոնների հետ:	3	-

1	2	3	4	5	6	7
9	ԷԿՈՆՈԳԻԱՅԻ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍՈՒԹՅԱՆ	4624,9	4,25	Դաշտային փորձերի և լաբորատոր աշխատանքների կատարման միջոցով հետազոտություններ են իրականացվել կարտոֆիլի, լոլիկի և տաքդեղի դաշտերում. առաջին անգամ փորձարկվել է իրանական արտադրության ազոտաբարվար 1 (մթնոլորտից ազոտ ֆիքսող), ֆոսֆատաբարվար 2 (դժվար մատչելի ֆոսֆորական միացությունները մատչելի դարձնող) բակտերիալ խտանյութերի, գոմաղբի, թռչնաղբի և նորագույն օրգանական պարարտանյութեր օրգանոմիքսի, կենսահումուսի և աճի խթանիչ կենսահեղուկի տարբեր չափաքանակների ու կիրառման ժամկետների համեմատական ազդեցությունը հիշյալ մշակաբույսերի աճի զարգացման և տնտեսաէկոլոգիական ցուցանիշների վրա: Առաջարկություններ են ներկայացվել «Խոսրովի անտառ» արգելոցի հարակից համայնքներում՝ կլիմայի գլոբալ փոփոխությամբ պայմանավորված էկոլոգիական վիճակի բարելավման ուղղությամբ:	7	-
10	ԱՆԱՍԱՆԱԲՈՒ- ԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ- ԿԱՆ ՍԱՆԻ- ՏԱՐԱԿԱՆ ՓՈՐ- ՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ	12949,8	11,75	Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել հանրապետության տարածքում գյուղատնտեսական կենդանիների՝ տարածում ունեցող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, բացահայտել դրանց առաջացման և տարածման պատճառներն ու մշակել բուժկանխարգելիչ միջոցառումներ: Հետազոտությունները կատարվել են հետևյալ բաղադրիչներով. Առաջին ենթաբաժին: Որոշվել է ստաֆիլոկոկերի դերն և նշանակությունը շների վիրուսային և ոչ վարակիչ գաստրոէնտերիտների, մակաբուծային և ոչ վարակիչ օտիտների դեպքում, առաջարկվել են բուժման արդյունավետ միջոցներ: Երկրորդ ենթաբաժին: Բացահայտվել է տավարի ճիճվային հիվանդությունների տարածվածությունը ՀՀ մարզերում: Երրորդ ենթաբաժին: Ուղղված է կովերի սիմպտոմատիկ անպտղության կանխարգելմանը և համալիր բուժմանը: Չորրորդ ենթաբաժին: Ուղղված է Հայաստանում տավարի նյութափոխանակության խանգարումների, մասնավորապես՝ կետոզի առաջացման պատճառների բացահայտմանը և բուժկանխարգելիչ միջոցառումների կազմակերպմանը: Հինգերորդ ենթաբաժին: Երևան քաղաքի իրացման կետերում կատարվել է ապիտամ որոշ մսամթերքի փորձաքննություն, գնահատվել է ազգաբնակչության համար դրանց անվտանգությունը, ուսումնասիրվել են սպառման կետերում ներկայացվող փաստաթղթերը, մթերքի փաթեթավորումը և մակնշումը, մսամթերքի համար նախատեսված փոխադրամիջոցների սանիտարահիգիենիկ վիճակը:	8	2

1	2	3	4	5	6	7
11	ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ	9249,8	9	Ուսումնասիրություններն իրականացվել են հետևյալ հիմնական ուղղություններով. 1. Նախկինում ստացված N, S, O պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների ֆունկցիոնալացում: 2. Երկու, երեք կամ չորս տարբեր հետերոցիկլեր պարունակող չհամակցված և համակցված համակարգերի նոր ածանցյալների նպատակային սինթեզներ: Տարբեր ֆարմակոֆոր հետերոցիկլերից կազմված համակարգերի ածանցյալների սինթեզներ՝ պեստիցիդային և ածակարգավորիչ հատկությունների համադրությամբ նոր պատրաստուկների հայտնաբերման ակնկալիքով:	11, որից մեկն արժանացել է 1-ին կարգի մրցանակի	4
				3. Սինթեզված միացությունների նախնական լաբորատոր-վեգետացիոն փորձարկումներ՝ դրանցից ընտրված առավել ակտիվ նյութերի հետագա խորը ուսումնասիրությունների և դաշտային փորձարկումների համար: Աշխատանքները ժամանակավորապես ընդատվել են ՀԱԱՀ-ի ջերմոցի վերականգնման պատճառով և կշարունակվեն 2020 թ. գարնանից: Հաշվետու տարում սինթեզված մոտ 270 միջանկյալ և վերջնական միացություններից լաբորատոր-վեգետացիոն փորձարկումների են ենթարկվել շուրջ 110-ը՝ ածախթանիչ, հերբիցիդային և ֆունգիցիդային հատկություններն ուսումնասիրելու նպատակով: Բարձր ածախթանիչ հատկություն է ցուցաբերել 13 պատրաստուկ:		
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ						
12	ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6975,7	5,5	Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայում ստեղծվել է լուիկի վայրի, տեղական արժեքավոր հիմնավուրց և արդի սորտանմուշների in vitro պայմաններում հավաքածու, որը, որպես <i>ԴՆԹ-ի աղբյուր, կիրառվել է փորձնական աշխատանքներում:</i> Ուսումնասիրվել է աուքսինների և ցիտոկինինների ազդեցությունը բողբոջների ձևավորման և զարգացման վրա, ընտրվել է սննդարար միջավայրերում դրանց խտությունների երեք տարբերակ՝ - Կինետին 0,1-0,5 մգ/լ, - Կինետին 0,4 մգ/լ+ ԻԶԹ 2,0 մգ/լ, - ԻԶԹ 1,0-2,0 մգ/լ: Բուսական ԴՆԹ-ի անջատման նպատակով կիրառվել է 2 մոդիֆիկացված մեթոդ՝ - ԴՆԹ-ի արագ անջատմամբ, - CTAB-դետերգենտի կիրառմամբ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքերը հնարավորություն կտան լուիկի տեղական սելեկցիայի սորտանմուշներն առավել նպատակային օգտագործել սելեկցիոն աշխատանքներում:	3	4

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի ֆոնդն առ 01.01.2020 թ. կազմում է 562,438 միավոր գրականություն, որից 198067-ը՝ ուսումնական, 311316-ը՝ գիտական, 49258-ը՝ գեղարվեստական:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված գրականությունը կազմել է 6239 միավոր (2826 անուն), որից՝ 1212 միավոր (39 անուն) համալսարանում հրատարակված: 2018 թ. ստացվել է 3225 միավոր (393 անուն) գրականություն, այդ թվում 1560 միավոր (42 անուն) համալսարանում հրատարակված:

Գրադարանի ընթերցողների թիվը 2019-ին կազմել է 2933 ընթերցող, որից 608-ը՝ համալսարանի աշխատակիցներ: KOHA գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը 2019 թ. կազմել է 2219, Koha էլեկտրոնային գրացուցակի կայքէջի օգտվողների թիվը՝ 37941:

Գրադարանի սպասարկման կետերում՝ ընթերցասրահներում, էլեկտրոնային ընթերցասրահներում և սպասարկման բաժնում հաճախումների թիվը 2019 թ. կազմել է 48445 (2018 թ.՝ 85260):

Սպասարկված գրականության քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 13310 միավոր. սպասարկման բաժնում՝ 4250, իսկ ընթերցասրահներում՝ 9060 միավոր: 2018 թ. համապատասխանաբար կազմել է 24806, 11206 և 12845 միավոր:

2019 թ. ՀԱԱՀ-ի աշխատակիցների գիտական հոդվածների համար նշանակվել է 122 դասիչ, իսկ 2018-ին՝ 208:

KOHA էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով 2019 թ. մուտքագրվել են 7964 միավոր (3781 անուն) գրականության տվյալներ, 403 գիտական հոդվածների նկարագրություններ և էլեկտրոնային տարբերակներ:

Գրադարանում շարունակվում է գրքերի թվայնացման գործընթացը. 2019 թ. թվայնացվել է 17 անուն գիրք:

ՀԱԱՀ «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի Թաիրովի գրադարանի գրքային ֆոնդը 2019 թ. մարտին տեղափոխվել է համալսարանի գրադարան, վերանորոգվել և գրանցվել են 2344 միավոր ռուսերեն և 669 միավոր այլ լեզուներով գրքեր: Այդ գրականությունից KOHA ծրագրով ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային գրացուցակ է մուտքագրվել 2463 միավոր (1912 անուն) գիրք, ինչպես նաև 957 միավոր (42 անուն) ամսագիր:

Գրադարանի library.anau.am կայքէջի օգտվողների թիվը 2019 թ. կազմել է 275545:

Գրադարանավարի օրվա առթիվ հոկտեմբերի 7-ին գրադարանը կազմակերպել է գրադարանի ֆոնդում առկա բազմալեզու հնատիպ և հազվագյուտ գրքերի ու ամսագրերի ցուցադրություն:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱԱՀ ՏՏ կենտրոնի կողմից 2019-ին վերջնական շահագործման հանձնվեց համալսարանի anau.am կայքի ամբողջովին նոր բովանդակությամբ կառավարման համակարգի վրա հիմնված տարբերակը, ինչը թույլ է տալիս օգտվել նաև SEO գործիքակազմից՝ առաջընթացի ապահովման, որոնման համակարգերում հասանելիության, ճանաչելիության մեծացման և թիրախային այցելությունների ներգրավման համար:

Ներդրվել է գիտելիքների ստուգման էլեկտրոնային թեստային համակարգը, որի հիմնական նպատակը քննությունների անցկացման արդյունավետության բարձրացումն է և ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվության ու թափանցիկության ապահովումը՝ քննությունների ընթացքում բացառելով դասախոս-ուսանող անմիջական շփումը: Կազմակերպվել են ուսանողների տվյալների մուտքագրման ուսուցման դասընթացներ և մուտքագրվել են 925 ուսանողների (1-ին կուրս առկա և հեռակա) տվյալներ և 9 առարկայի հարցաշարեր՝ ավելի քան 3700 հարցով:

Վերջին կիսամյակում Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակում գրանցվել է մոտ 400 ուսանող և ստեղծվել մոտ 215 առարկա:

2019-2020 ուսումնական տարվա բակալավրիատի առկա և քոլեջի ընդունելության կազմակերպման համար իրականացվել են գովազդային տեսահոլովակների և ձայնային հոլովակների պատրաստում ու տարածում ATV, Armnews, Erkir Media հեռուստաալիքներով և Հայաստանի հանրային ռադիոյով:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ում անցկացված միջոցառումները նկարահանվել, մոնտաժվել և տեղադրվել են www.youtube.com հարթակի ՀԱԱՀ ալիքում:

Կենտրոնը Վանաձորի և Սիսիանի մասնաճյուղերի հետ կազմակերպել և իրականացրել է հեռավար ուսուցման 969 ժամ դասընթացներ:

Ստեղծել են files.anau.am և docs.anau.am ներքին փաստաթղթերի էլեկտրոնային հարթակները, որոնք համալսարանի բոլոր ստորաբաժանումներին թույլ են տալիս ներբեռնել օգտագործվող փաստաթղթերը և դրանք հասանելի դարձնել մյուս ստորաբաժանումներին:

Պարբերաբար կազմակերպվել են Գիտելիքների ստուգման էլեկտրոնային թեստավորման, Moodle և eBuh.am համակարգերի վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է ՀԱԱՀ 750 աշխատակից: Ավարտին են մոտենում ebuh.am ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի ուսանողի ինտերֆեյսի մշակման աշխատանքները, պլանավորվում է այն շահագործման հանձնել 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում:

Տեղադրվել է նոր սերվերային համակարգ և իրականացվել են առանցքային փոփոխություններ գրեթե բոլոր սերվերային համակարգերում ու կայքէջերում՝ անվտանգության և կայունության ապահովման համար:

Խելացի ջերմոցների ներդրման ծրագրի շրջանակում թայվանցի մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել և ներդրվել են AgriTalk1 և AgriTalk2 համակարգերը:

Աղյուսակներ 4 և 5-ում ներկայացված են 2019 թ. համալսարանի կայքէջերի այցելումների թիվը, աճը նախորդ տարվա համեմատ, դիտումների քանակն ըստ երկրների, տարիքի և այլն:

Աղյուսակ 4

Կայքէջի այցելուների թիվը և աճը նախորդ տարվա համեմատ

Կայք	Այցելուների թիվը	Աճը 2019 թ. համեմատ
https://www.anau.am/	147,635	66,05 %
http://library.anau.am/	120,545	53,93 %
http://persons.anau.am/	7,857	9,5 %
Ընդհանուր	276,037	-

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի պաշտոնական կայքէջի (<https://www.anau.am/>) նոր այցելուների թիվը կազմել է 140029, որը նախորդ ուսումնական տարվա համեմատ մոտ 10 %-ով ավելի է:

Աղյուսակ 5

Կայքէջի այցելություններն ըստ երկրների

Յ/հ	Երկիրը	Այցելությունների թիվը
1	 Հայաստան	126,848
2	 Ռուսաստան	5,981
3	 ԱՄՆ	5,775
4	 Գերմանիա	1,127
5	 Հոնգ-Կոնգ	900
6	 Վրաստան	836
7	 Ուկրաինա	521
8	 Ֆրանսիա	503
9	 Հնդկաստան	435
10	 Չինաստան	271


Համալսարանի կարիքների համար կազմվել են անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի գնման տեխնիկական տվյալները, էլեկտրոնային աճուրդով գնման կազմակերպման փաստաթղթերը, այնուհետև կատարվել են գնված ապրանքների ընդունման և պահեստավորման աշխատանքներ:

2019 թ. համալսարանի գույքագրման ընթացքում Կենտրոնի ՏՏ համակարգերի սպասարկման բաժնի աշխատակիցները եղել են համալսարանի բոլոր մասնաշենքերում, մասնաճյուղերում, գիտահետազոտական կենտրոններում, բոլոր ստորաբաժանումներում և կատարել համակարգչային տեխնիկայի գույքագրում:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում համակարգվել են **110** ֆերմերների համար իրականացված մեկշաբաթյա դասընթացները:



Նկ. 8. Մասնակիցներն ըստ մարզերի և սեռի:

- «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն»-ի հետ համատեղ իրականացվել է ինտենսիվ դասընթացների և խորհրդատվությունների ծրագիր, որի շրջանակում համալսարանի դասախոսները և կամավորները վերականգնողական կենտրոնում վարել են ինտերակտիվ դասընթացներ:
- Համակարգվել է Չանգեզուրի պոլսամոլիբդենային կոմբինատի հետ համատեղ իրականացվող «Կանաչ տնկարկների նախագծման սկզբունքները և փուլերը» տասնօրյա կարճաժամկետ դասընթացը:
- Նոյեմբերի 6-8-ը կազմակերպվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 17 ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի աշխատակիցների եռօրյա այցը ՀԱԱՀ, որի ընթացքում կազմակերպվել են 5 մասնագիտական դասախոսություն, շրջայցեր Ոսկեհատի ուսումնասիրոճնական տնտեսություն, ՀԱԱՀ պատմության թանգարան, գինեդարան, Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն, EVN Wine Academy և «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպություն:
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստումների նպատակով կատարվել է ֆակուլտետների ներքին կարիքների վերլուծություն, կազմակերպվել է 11 դասախոսի պիլոտային վերապատրաստում:
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել են հանդիպումներ ոլորտում հայտնի ընկերությունների ներկայացուցիչների հետ:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

Ուսանողների և շրջանավարտների շրջանում ինֆորմացիայի տարածման անմիջական ու արագ կապի ստեղծման համար Facebook սոցիալական հարթակում ներդրված էլեկտրոնային հարթակին 2019 թ. դեկտեմբերի դրությամբ հետևում է 2 511 անձ, իսկ հարթակի միջոցով տարածված հայտարարությունները հասանելի են 11 949 արտաքին շահառուներին:

2019 թ. ընթացքում հարթակում հրապարակվել է տեղեկատվություն դասընթաց-սեմինարների, հանդիպումների և այլ հնարավորությունների, ինչպես նաև 200 թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

2019 թ. ապրիլի 17-19-ը Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժինը մասնակցել է «Կրթություն և կարիերա EXPO-2019» ցուցահանդեսին:

«Եվրոպայի օրեր» միջոցառման շրջանակներում բաժնի նախաձեռնությամբ ՀԱԱՀ և ԱՌԻԿ-ի 10 ուսանող մասնակցել է ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկու հետ հանդիպում-քննարկմանը, որի թեման միջազգային համագործակցությունն էր, աշխատանքային լեզուն՝ անգլերենը:

Մասնագիտական կողմնորոշման և ապագա ուսանողների հավաքագրման գործընթացի կազմակերպման համար 2019 թ. մայիսին և սեպտեմբերին կազմակերպվել է «Բաց դռների օր», որի ընթացքում համալսարանն ընդունել է 330 մասնակցի: Նույն գործընթացի շրջանակներում բաժինն ընդունել և շրջայցեր է կազմակերպել ավագ դպրոցի 140 աշակերտի և վարժարանականի համար:

Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող ծրագրի շրջանակում բաժինը կազմակերպել է հանդիպում ՀԱԱՀ-ի վերջին կուրսի ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների հետ:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ», «ԱՐԿՈԼԱԴ», «ՍՊԱՅԿԱ», «Арросфера», «ID-Bank», «GIZ» ընկերությունների ներկայացուցիչների հետ, ովքեր ուսանողներին ներկայացրել են իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները և կարիերայի զարգացման հեռանկարները:

Երիտասարդների զարգացման եռամսյա ծրագրերի շրջանակներում «Կոկա-Կոլա Յելլենիկ Բոթլինգ Քամինսի Արմենիա» և «Մենեջմենթ Միքս» ընկերությունների կողմից կազմակերպվել է «Կյանքի հմտություններ» թեմայով դասընթաց, որին մասնակցել է մոտ 200 ուսանող:

ՀԱԱՀ-ի մարզաբնակ ուսանողների համար իրականացվել է «ԱՍՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» ծրագիրը, որի շրջանակում 5 ուսանող ներկայացրել է համայնքային զարգացման ծրագիր և ստացել կրթաթոշակ:


Բաժնի աշխատակիցները մասնակցել են «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության կազմակերպած «Երիտասարդների նախապատվությունները ներգրավվելու հանրային ոլորտ» թեմայով ֆոկոսային խմբի քննարկման, ինչպես նաև նույն թեմայով 60 ուսանողների շրջանում անցկացվել են հարցումներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 25 բուհերի և կազմակերպությունների հետ. 2019 թ. կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 13 հուշագրեր և պայմանագրեր:

ԷՐԱՍՄՈՒՍ+ ՀԳ1 ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2019 թ. Էրասմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակում իրականացվել են բազմաթիվ դասավանդումներ և վերապատրաստումներ՝ համագործակցություն ծավալելով ավելի քան 26 տարբեր եվրոպական համալսարանների հետ: 2019 թ. համալսարանն ունեցել է 32 Էրասմուս+ ՀԳ1 ծրագիր, այդ թվում՝ 21-ը նոր (2018-ին՝ 19 նոր), հաստատված 2019-ին (ևս 11-ը շարունակվում են 2018 թվից): Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ի հին գործընկեր համալսարանների հետ կապը չի խզվում, միաժամանակ ավելանում են նաև նոր գործընկեր բուհեր:



ԵՐԱՍՄՈՒՄ+ ԶԳԶ ԾՐԱԳՐԵՐ

TOPAS ծրագրի շրջանակում իրականացվել է 4 աշխատանքային հանդիպում, որոնց ընթացքում քննարկվել է ծրագրի կատարողականը, մշակվել են հետագա քայլերը և այլ ծրագրային հարցեր: 12 ուսանող և 4 դասախոս վերապատրաստվել են եվրոպական գործընկեր համալսարաններում: Ընդ որում՝ բացի դասերից, մասնակիցներն այցելել են տնտեսություններ, մասնակցել տվյալների հավաքագրմանն ու վերլուծմանը:

2019 թ. մայիսի 31-ին TOPAS-ի ֆինանսավորմամբ ՀԱԱՀ-ում բացվեց համակարգչային լսարան, որը կծառայի տվյալների վերամշակմանն ու էլեկտրոնային դասընթացների իրականացմանը: Ծրագրի շրջանակում բենչմարքինգի միջոցով վերանայվել և արդիականացվել են ԱԷԿ-ՍԷԿ բակալավրային և Ագրարային մենեջմենթ մագիստրոսական կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը:

2019 թ. ապրիլ-մայիս ամիսներին Ագրոբիզնեսի և տնտեսագիտության 40-ից ավելի դասախոսներ վերապատրաստվել են ուսանողակենտրոն ուսուցման և գնահատման ուղղությամբ, իսկ հոկտեմբեր-նոյեմբերին 30-ից ավելի դասախոս՝ տվյալների հավաքագրման և մշակման ուղղությամբ:

AbioNet ծրագրի շրջանակում իրականացվել է 2 ծրագրային հանդիպում: Տերմոյում մասնակցները նաև վերապատրաստվել են իրենց մասնագիտական ուղղվածության, ինչպես նաև կրթական պլաններում ձեռնարկատիրական հմտությունների խթանման ուղղությամբ: Ծրագրի շրջանակում կազմվել է սննդի անվտանգության մագիստրոսական ուսումնական պլան, հստակեցվել են մասնագիտության կրթական վերջնարդյունքները, կազմակերպվել են հանդիպումներ գործատուների, ուսանողների և դասախոսների հետ: Ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա:

ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

APPEAR ծրագրի շրջանակում Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի (BOKU) հետ իրականացվող «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագրով ավատրիացի մասնագետների կողմից Հայաստանում վերապատրաստման դասընթացներ են անցկացվել օրգանական սերտիֆիկացման, օրգանական մշակաբույսերի ու մրգերի արտադրության, ցանքաշրջանառության, օրգանական երկրագործության թեմաներով: Մշակվել են «Օրգանական Էթիկա» և «Հետազոտության որակական մեթոդներ» առարկաների ծրագրերը: Ավարտին են հասցվել կրթական ծրագրի առարկայական ցանկի, առարկայական ծրագրերի բովանդակության մշակման աշխատանքները: Մագիստրոսական կրթական ծրագիրն այս պահին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից վերջնական հաստատման փուլում է:

«Գյուղատնտեսական զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագիր բույսերի մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում» ծրագրի շրջանակում (Եվրասիա կրթական ծրագիր) ՀԱԱՀ-ի ուսանողների համար կազմակերպվել են «Բույսերի կենսատեխնոլոգիա» և «Մոլեկուլային կենսաբանություն» թեմաներով դասընթացներ: 7 ուսանող և ասպիրանտ հետազոտություններ են կատարել և վերապատրաստվել Նորվեգիայում:

ՀԱԱՀ-ն մասնակցել է NUFFIC-ի աջակցությամբ ֆինանսավորվող ծրագրի մրցույթին և ձեռք բերել համալսարանում «Հայաստանում կլիմայի փոփոխությունների նկատմամբ բույսերի գենետիկական ռեսուրսների և նախաբուծման կառավարման

ուղղությամբ կարողությունների զարգացում» թեմայով երկշաբաթյա վերապատրաստում անցկացնելու հնարավորություն, որին մասնակցել են ՀԱԱՀ-ի 15 դասախոս և գիտաշխատող:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին: 2019 թ. ՀԱԱՀ 28 աշխատակից մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների, համաժողովների և հանդիպումների: Համաժողովների թեմաները ներառել են ագրարային ոլորտի գրեթե բոլոր ուղղությունները և ոչ միայն: 2018 թ. նմանատիպ միջոցառումների մասնակցել է ՀԱԱՀ-ի 11 աշխատակից:

Վերապատրաստումներ: 2019 թվականին այլ (բացի Էրասմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման է մեկնել ՀԱԱՀ-ի 20 աշխատակից (2018-ին՝ 12):

- DIKU կողմից ֆինանսավորվող ԲիոԴատա ծրագրի շրջանակում կենսաբազմազանության նմուշների հետազոտման, տվյալների կառավարման, ստանդարտացման և հրապարակայնացման ինտենսիվ դասընթաց (Բելառուս):

- Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագրի շրջանակում վերապատրաստում Թրոմսոյի Արկտիկական համալսարանում (Նորվեգիա):

- Մնասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն դրամաշնորհային ծրագրի շրջանակում վերապատրաստում Բարսելոնայի ինքնավար համալսարանում (Իսպանիա):

- Հայ-ավստրիական «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում վերապատրաստում Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանում (Ավստրիա):

- «Մենդի անվտանգության վերահսկում, արտահանման և ներմուծման անվտանգության վերահսկում» թեմայով երկկողմանի սեմինար (Զինաստան):

- «Մեկ գոտի մեկ ճանապարհ երկրների համար չորային և կիսաչորային շրջաններում ջրախնայող ոռոգման տեխնոլոգիաների զարգացում» թեմայով դասընթաց (Զինաստան):

- *Making agriculture work for food and nutrition security* դասընթաց Վախենինգենի համալսարանում (Նիդերլանդներ):

- Վալիենշտեֆան-Թրիստորֆի համալսարանի կողմից կազմակերպված վերապատրաստում (Գերմանիա):

- Ամստերդամի կիրառական գիտությունների համալսարանի կողմից կազմակերպված վերապատրաստում:

2019 թ. ՀԱԱՀ ռեկտոր Վ. Ուռուտյանը պաշտոնական միջազգային այցեր և հանդիպումներ է ունեցել Գերմանիայի և ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում՝ նպատակ ունենալով ընդլայնել և խորացնել միջազգային համագործակցությունը:

ՀԱԱՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2019 թ. համալսարանը հյուրընկալեց Պարենային ապահովության եվրասիական 4-րդ խորհրդաժողովը, որի նպատակն էր ապահովել տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների, գիտակրթական կառույցների և կառավարությունների հարթակ՝ եվրասիական երկրների պարենային ապահովությանն առնչվող տարաբնույթ մտահոգություններին արձագանքելու համար: Խորհրդաժողովին մասնակցում էին 22

երկրների ներկայացուցիչներ, ներկայացվեցին շուրջ 70 զեկույց և հոդվածներ: Խորհրդաժողովը կազմակերպվել էր Պարենային ապահովության եվրասիական կենտրոնի հետ համատեղ՝ ՄԱԿ-ի ՊԳԿ-ի, Համաշխարհային բանկի, Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ:

Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ՝ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն Ագրարային համալսարանում կազմակերպել էր «Կրթության և գիտական հաստատությունների դերը սպառողների իրավունքների պաշտպանության հարցում» թեմայով գիտաժողով, որին ներկա էին ՀԱԱՀ-ի և այլ համալսարանների գիտնականներ, դասախոսներ, ուսանողներ, ինչպես նաև ՍԱՏՄ մասնագետներ:

«Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանումը ՀՀ-ում» թեմայով խորհրդաժողովը, որը համատեղ կազմակերպել էին Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ) և Ագրարային համալսարանը, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մասնակցությամբ Ագրարային համալսարանում մեկտեղել էր ոլորտի շահակիցներին, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների: Խորհրդաժողովը նվիրված էր ԱՄԿ աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման համաշխարհային օրվան:

ՀԱԱՀ-ում տեղի ունեցավ «Տնտեսագիտաիրավական և սոցիալ-մշակութային փոխգործակցության գործոններն ինտեգրացիոն հասարակությունում» վերտառությամբ երկօրյա միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի 13 բուհերի 19 և Հայաստանի 5 բուհերի 30 գիտնականներ: Համաժողովը համատեղ կազմակերպել էին ՀԱԱՀ-ն, ՌԴ կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանը, ՌԴ գիտությունների ակադեմիան, Հյուսիսային Կովկասի մի շարք համալսարաններ՝ Կուբանի «Գիտակրթական նախաձեռնություններ» հասարակական, բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

2019 թ. հոկտեմբերի 7-ին Ագրարային կրթության, գիտության, ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչները «Պտղաբուծության զարգացման ազգային համաժողովի» հարթակում քննարկեցին ոլորտի հիմնախնդիրները, լուծումներն ու զարգացման հեռանկարները: Համաժողովի կազմակերպիչներն էին HEKS EPER Հարավային Կովկասի գրասենյակը և «Շեն» ԲՀԿ-ն:

ՀԱԱՀ-ում անցկացվեց Հայկական տնտեսագիտական միության (ՀՏՄ) ամենամյա գիտաժողովի երկրորդ օրը, որի ընթացքում հայաստանյան և արտերկրի մի շարք համալսարաններ ներկայացնող հետազոտող դասախոսները, երիտասարդ մասնագետները հանդես եկան զեկույցներով:


2019 թ. նոյեմբերի 20-ին մեկնարկեց «Սննդամթերքի անվտանգություն, ներմուծվող ու արտահանվող սննդամթերքի վերահսկողություն և կարանտին» թեմայով սեմինար-ուսուցումների շարքը, որը կազմակերպվել էր Չինաստանի սննդի և խմորման արդյունաբերության պետական գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ՝ Չինաստանի կոմերցիայի նախարարության աջակցությամբ: 21-օրյա սեմինարի ընթացքում ՍԱՏՄ պատասխանատուները, ֆերմերները, ուսանողները և դասախոսները ծանոթացան սննդամթերքի անվտանգության ոլորտում ՉԺՀ օրենսդրական կարգավորումներին, ներմուծման և արտահանման ընթացակարգերին: Սեմինարը նպաստեց նաև երկու երկրների միջև առևտրատնտեսական, գիտակրթական գործակցության խորացմանը:

2019 ուսումնական տարում ՀԱԱՀ-ում վերապատրաստվել և դասախոսություններով հանդես է եկել 39 դասախոս՝ Պիրեոսի, Միգել Յերնանդեսի, Մինիոյի, Վախենինգենի, Սյոդերթյորնի համալսարաններից:

Երկկողմանի համագործակցություն սկսելու և խորացնելու ուղղությամբ ՀԱԱՀ-ում հյուրընկալվել են Շվեդիայի Սյոդերթյորնի համալսարանի դասախոսները և միջազգայնացման գծով ռեկտորի խորհրդականը, Վալհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի պատվիրակությունը, Արաբական Միացյալ Էմիրությունների անշարժ գույքի տեխնիկական զարգացման կորպորացիայի գործադիր նախագահը, Աֆղանստանի ագրարային բուհերի և մասնավոր հատվածի 12 ներկայացուցիչ, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության երևանյան գրասենյակի ղեկավարը, ԱՄՆ ՊԴ ՎՆԳ Կենսաբանական վտանգների նվազեցման հայաստանյան ծրագրի ղեկավարը, Ռուսաստանի, ԱՄՆ-ի Իտալիայի, Լիբանանի դեսպանները, ինչպես նաև Նիդերլանդների թագավորության փոխդեսպանի գլխավորած պատվիրակությունը:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏԿՅԱԼՆԵՐ

2019 թ. ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների ու հանդիպումների:



Աղյուսակ 6

2019 թ. գործուղումներ (ուսանողներ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակը	%
Erasmus+ ՀԳ1	39	65
Erasmus+ ՀԳ2	16	26,6
Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագիր	1	1,7
ՎԿԳՀ, DAAD	3	5
Այլ	1	1,7
Ընդամենը	60	100

Աղյուսակ 7

2019 թ. գործուղումներ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակը	%
Erasmus+KA1 (որից 1-ը՝ ոչ համալսարանական ծրագրով)	46	36,8
Erasmus+KA2 (որից 1-ը՝ ոչ համալսարանական ծրագրով)	17	13,6
«Ձեռնարկատիրական ունակությունների զարգացման միջոցով զբաղվածության խոչընդոտների կրճատման» ծրագիր	1	0,8
GBIF (գլոբալ կենսաբազմազանության ինֆորմացիոն միջոցներ)	1	0,8
ԲիոԴատա	6	4,8
Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագիր	2	1,6
Այլ	52	41,6
Ընդամենը	125	100

Աղյուսակ 8

2019 թ. ՀԱԱՀ ժամանումներ

Ծրագիր/պայմանագիր	Քանակը	%
Erasmus+ KA1	13	33,3
Erasmus+ KA2 TOPAS	19	48,7
Այլ	7	18
Ընդամենը	39	100

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԱՀ ուսանողական խորհուրդն ունի 25 %-անոց ներկայացվածություն համալսարանը կառավարող բոլոր մարմիններում՝ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման, ուսանողներին ֆինանսական օգնությունների տրամադրման և անվանական կրթաթոշակների նշանակման գործընթացին:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից են ուսանողների իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Տարվա ընթացքում բազմաթիվ ուսանողներ ներկայացրել են բազմաթիվ խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի, քննությունների կազմակերպման, արտադրական և ուսումնական պրակտիկաների կազմակերպման, դասախոսությունների որակի բարելավման և դասախոսների հետ: Այդ խնդիրները ներկայացվել են համալսարանի ղեկավարությանը:

Ուսանողական խորհուրդն ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպել է ուսանողական ամենամյա գիտաժողովի ֆակուլտետային նստաշրջանները, իրականացրել բազմաթիվ քննարկումներ, մասնագիտական այցեր, սեմինարներ:

2019 թվականի ընթացքում իրականացրել է ավելի քան 15 մշակութային, 18 մարզական, 8 ինտելեկտուալ, 12 ժամանցային, 13 ճանաչողական, 4 բնապահպանական միջոցառումներ: Ստեղծվել է ՀԱԱՀ բոլոր ժամանակների ուսխորհրդականների տվյալների բազան և «Հայացք» ուսանողական ալիքը:

Կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության և արտադրության ճանաչված գործիչների հետ, շարունակվել և ստեղծվել է համագործակցությունը ՀՀ պետական և ոչ պետական բուհերի, ինչպես նաև Արցախի բուհերի ուսանողական կառույցների, Հայաստանի ուսանողության ազգային ասոցիացիայի և մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Հաստատվել են համագործակցության նոր կապեր:

ՄԱՐԴԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի՝ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համալսարանի և մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվը կազմել է **1226**, որից՝

Վանաձորի մասնաճյուղ	- 38,
Սիսիանի մասնաճյուղ	- 33,
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն	- 22,
Խաղողապտղագիտագործության գիտական կենտրոն	- 16,
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն	- 23,
Շիրակի ալ. Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ	- 33:

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվը կազմում է 1144:

Բացի այդ՝ տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել 56 անձանց հետ, շին. վերանորոգման աշխատանքներ կատարելու համար՝ 14 անձանց հետ:

2019 թվականին 412 անձի հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր:

Աղյուսակ 9-ում ներկայացված է փաստացի աշխատակիցների թիվն ըստ գործունեության ոլորտների:

Աղյուսակ 9

ՀԱԱՀ փաստացի աշխատակիցների թիվը

ՀԱԱՀ ստորաբաժանումներ	Հիմնական փաստացի աշխատողների թիվը
Վարչական	45
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ	536
Պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված է 536 դասախոս, որից ներքին համատեղությամբ աշխատողների թիվը կազմում է 50 դասախոս:	
Ժամավճարային դասախոսներ	18
Դեկանատների, ամբիոնների և լաբորատորիաների ուսումնառական անձնակազմ	120
Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն	20
Քոլեջ	7
Հենակետային վարժարան	33
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	22
Գիտության դեպարտամենտ՝ իր ստորաբաժանումներով	4
Բազային ֆինանսավորմամբ ԳՀ ինստիտուտ և կենտրոն պրոբլեմային լաբորատոր.(բազային) ծրագրեր	54
Գիտահետազոտական ինստիտուտներում, պրոբլեմային լաբորատորիաներում ընդգրկված է 112 աշխատող:	

Գրադարան	26
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	14
Ագրոբիզնես դեպարտամենտ	5
Ագրոբիզնես դեպարտամենտի ծրագիր	1
Ագրոբիզնես դեպարտամենտի ժամավճարային դասախոսներ	4
Տարվա ընթացքում կնքվել է աշխատանքային պայմանագիր 18 դասախոսների հետ ժամավճարային կարգով աշխատելու համար:	
Տնտեսական վարչություն	171
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ (կաթսայատուն) իրականացնելու համար աշխատանքային պայմանագիր է կնքվել 13 մարդու հետ:	
«Բալահովիտ» ՌԻՓՏ «Ոսկեհատ» ՌԻՓՏ	29+1 սեզոնային 8
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար աշխատանքային պայմանագիր է կնքվել 33 մարդու հետ:	
Աղավառի «Չարթոնք» հանգստյան տուն	8+9
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար աշխատանքային պայմանագիր է կնքվել 35 մարդու հետ:	

2019 թ. աշխատանքի է ընդունվել 23 երիտասարդ դասախոս:

2019 թ. 6 աշխատող պարգևատրվել է համալսարանական պատվոգրերով, 10 աշխատող՝ շնորհակալագրով:

Համալսարանի վարկանիշավորման կարևոր ցուցանիշներից մեկը համալսարանում ուսանող-դասախոս հարաբերակցությունն է, որը հաշվարկվում է Common Data Set (CDS) Initiative-ի առաջարկած բանաձևով, U.S. News & World Report-ի պահանջն է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ համալսարանների վարկանիշային ցուցակում ընդգրկվելու համար:

Բանաձևը հետևյալն է՝

$$\text{ՌԻ/Դ} = [\text{SF} + \text{SP}/3] / [\text{FFI} + (\text{FFN} + \text{FPI})/3],$$

որտեղ SF-ը առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն է, SP-ն՝ հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը, FFI-ն՝ դասախոսների թիվը, FFN-ը՝ համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը, FPI-ն՝ ժամավճարով աշխատող դասախոսների թիվը:

Այսպիսով՝ ՀԱԱՀ ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2019 թ., ներառյալ Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը, կազմել է՝

$$\text{ՌԻ/Դ} = [2907 + 3937/3] / [484 + (50 + 18)/3] = 8,3:$$

Իսկ այդ նույն հարաբերակցությունը, ներառյալ Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը և 3 մասնաճյուղերը, կազմում է՝

$$\text{ՌԻ/Դ} = [3570 + 3937/3] / [533 + (50 + 75)/3] = 8,5:$$

Տարվա ընթացքում աշխատանքի է ընդունվել 488 մարդ, ազատվել՝ 739, որից՝

- աշխատողի նախաձեռնությամբ՝ 234,
- այլ պատճառներով (օրենքով սահմանված, աշխատանքային տարիքը լրանալու, մահվան, աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու դեպքերում)՝ 427,
- կրճատվածներ՝ 78:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՀ ֆինանսատնտեսական գործունեության 01.01.2019 - 31.12.2019 թթ. ամփոփ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019 թ. 1,153,458 հազ. դրամ

Հ/հ	Հոդվածներ	2019 ապրիլ	2019 դեկտեմբեր	2019
		հաստատված նախահաշ.	ճշգրտված նախահաշ.	ՓԱՍՏԱՑԻ
		հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
	Մուտք			
1	Պետ. բյուջե	623 000	623 000	770 449
2	Արտաբյուջե (ուսման վարձեր, ծրագրեր, այլ)	1 550 000	1 550 000	1 473 041
3	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	2 173 000	2 173 000	2 243 490
	Ելքեր			
4	Աշխատավարձ ե/հարկը ներառյալ	1 785 000	1 900 000	1 899 734
5	Կրթաթոշակ	32 000	40 000	40 921
6	Էլ. էներգիա	47 000	50 000	49 526
7	Զուր	11 500	16 000	16 294
8	Գազ	20 000	33 000	33 098
9	Կապ, փոստ, ինտերնետ	13 000	13 000	9 705
10	Կոմունալ	14 000	14 000	480
11	Տպագրական ծախսեր	8 500	8 500	2 000
12	Տրանսպորտային ծախսեր	15 500	15 500	16 141
13	Գործուղում (ներառյալ դրամաշն. ծրագրեր)	16 000	35 000	35 802
14	Գրասեն. ծախսեր	15 000	15 000	7 401
15	Գույք, այդ թվում՝ գրաս., լսարան.	8000	13 000	13 951
16	Լաբորատոր սարք.	45 000	45 000	1 415
17	Սարքավորումներ	15 000	25 000	22 391
18	Համակարգչային տեխնիկա	45 000	45 000	38 196
19	Գրականության ծեռքերում	5 000	5 000	342
20	Շենք. շին. ընթացիկ նորոգում	60 000	60 000	36 265
21	Ուսանող. ֆոնդ, երիտասարդ. ծրագիր, ուս. խոր.	3 200	3 200	2 507
22	Ներդրում ՌԻՍԾՏ (Բալահովիտ, Ոսկեհատ, Ակունք և Չարթունք)	35 000	53 000	53 550
23	Մյասնիկյան 2 մասնաշենքի հիմնանորոգում (վերադարձ պետբյուջե)	210 000	150 000	149 650
24	Հարկեր, տուրքեր	42 000	70 000	69 593
25	Այլ ծախսեր	10 000	10 000	10 236
26	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	2 455 700	2 619 200	2 509 198

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2020 թ. 887,750 հազ. դրամ

Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար

2019 թ. ստացված միջոցներ

1. Թեմատիկ դրամաշնորհ	55 876 հազ. դրամ
2. Ենթակառույցների պահպ.	244 400 հազ. դրամ
3. Գիտ. աստիճ. համակարգում	25 550 հազ. դրամ
4. Ասպիր. դեկավ.	16 299 հազ. դրամ
5. Ասպիրանտ. կրթաթոշակ	4 240 հազ. դրամ
<i>Ընդամենը</i>	<i>346 356 հազ. դրամ</i>

2019 թ. ծախսված միջոցներ

1. Թեմատիկ դրամաշնորհ	55 876 հազ. դրամ
2. Ենթակառույցների պահպ.	236 400 հազ. դրամ
3. Գիտ. աստիճ. համակարգում	25 550 հազ. դրամ
4. Ասպիր. դեկավ.	16 299 հազ. դրամ
5. Ասպիրանտ. կրթաթոշակ	4 240 հազ. դրամ
<i>Ընդամենը</i>	<i>338 356 հազ. դրամ</i>

Համալսարանի մասնաճյուղերի 2019 թ. ֆինանսական գործունեության ամփոփ հաշվետվություն

ՀԱԱՀ-ի Սիսիանի մասնաճյուղ

Դրամական մնացորդն առ 01.01.2019 թ.	21 223 հազ. դրամ
Մուտք	Պետ. բյուջե 668,3
	Արտաբյուջե 39 252,7

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտային հարկ	33 561
2	Այլ ծախսեր	10 298
	<i>Ընդամենը</i>	<i>43 859</i>

Մնացորդն առ 01.01. 2020 թ. 17 494,6 հազ. դրամ

ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղ

Դրամական մնացորդն առ 01.01. 2019 թ.	28 462,7 հազ. դրամ
Մուտք	Պետբյուջե 977
	Արտաբյուջե 85 174

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտային հարկ	51 530
2	Այլ ծախսեր	15 787
3	<i>Ընդամենը</i>	<i>67 317</i>

Մնացորդն առ 01.01. 2020 թ. 39 000 հազ. դրամ

Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ

Դրամական մնացորդն առ 01.01.2019 թ. 675 հազ. դրամ

Մուտք Պետ բյուջե 36 375
 Արտաբյուջե 1 067

1	Աշխատավարձ և եկամտային հարկեր	31 421
3	Այլ ծախսեր	5 333
	Ընդամենը	36 754

Մնացորդն առ 01.01.2020 թ. 1 363 հազ. դրամ

Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն

Դրամական մնացորդն առ 01.01.2019 թ. 578 հազ. դրամ

Մուտք Պետբյուջե 38 608
 Արտաբյուջե 5 273

1	Աշխատավարձ և եկամտային հարկ	30 554
2	Այլ ծախսեր	13 728
	Ընդամենը	44 282

Մնացորդն առ 01.01. 2020 թ. 178 հազ. դրամ

Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019 թ. 1 183 հազ. դրամ

Մուտք Պետբյուջե 32 764
 Արտաբյուջե 250

	Աշխատավարձ և եկամտային հարկ	27 507
2	Այլ ծախսեր	5 186
3	Ընդամենը	32 693

Մնացորդն առ 01.01. 2020 թ. 1 504 հազ. դրամ

Ջ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019 թ. 469 հազ. դրամ

Մուտք Պետ բյուջե 108 938
 Արտաբյուջե 40 332

1	Աշխատավարձ և եկամտային հարկ	106 854
3	Այլ ծախսեր	48 897
	Ընդամենը	155 752

Մնացորդն առ 01.01.2020թ. 2 987 հազ. դրամ

ՀԱՍՏ 2020 թվականի ֆինանսական միջոցների մուտքերի-ծախսերի նախահաշիվ

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2020 թ. 887,750 (հազ. դրամ)

Հ/հ	Հոդվածի անվանումը	2020
	ՄՊԱՍՎԵԼԻՔ ՄՈՒՏՔԵՐ	2,120,000,0
1	Եկամուտներ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումից	700,000
2	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից	1,100,000
3	Այլ եկամուտ	320,000,0
3.1	Դրամաշնորհային պայմանագրերից եկամուտներ	150,000
3.2	Այլ աշխատանքներից եկամուտներ	140,000
3.3	Պասիվ եկամուտներ	30,000
	ՄՊԱՍՎԵԼԻՔ ԵԼՔԵՐ	2,289,600
1	Աշխատավարձին ուղղված միջոցներ	1,800,000
2	Կրթաթոշակ	35,000
3	Գրասենյակային, տնտեսական և կոմունալ	127,700
3.1	Գրասենյակային	8,200
3.1.1	Էլեկտրոնային համակարգերի սպասարկում, mulberry	1200
3.1.2	Գրասենյակային այլ ծախսեր	7000
3.2	Տնտեսական ծախսեր	23,500
3.2.1	Վառելիքի ծեփերում	13000
3.2.2	Դեղորայքի ծեփերում	1000
3.2.3	Տնտեսական ապրանքներ և նյութեր	9500
3.3	Կոմունալ	96,000
3.3.1	Գազ	31000
3.3.2	Էլ. էներգիա	48000
3.3.3	Ջուր	15000
3.3.3	Աղբահանություն, դեռատիզացիա	1000
3.3.4	Կոյուղաջրերի խողովակների մաքրում	1000
4	Տպագրական աշխատանքներ	2,000
5	Գրական. ձեռքբերում, բաժանորդագրություններ	1,000
6	Էլեկտրոնային կառավարման համակարգերի ձեռքբերում	14,000
6.1	Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում	7500
6.2	ՄՌԿ էլ. կառավարման համակարգի ներդրում	3000
6.3	Հաճախումների կառավարման համակարգ	1500
6.4	Տեսահսկման համակարգ	2000
7	Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	13,900
7.1	Գնումների իրականացման խորհրդատվական ծառայություններ	5400
7.2	Ֆինանսական կառավարման խորհրդատվություն	1500
7.3	Արտաքին աուդիտ	3000
7.4	Բուհի հավատարմագրում	3000
7.5	Այլ ծառայություններ	1000
8	Գործողման և ներկայացուցչական	18,000
8.1	Գործողման ծախսեր	10000
8.2	ՈԲժեկտային ծառայությունների ծառայություն	3000
8.3	Ներկայացուցչական ծախսեր	5000
9	Փոստային և կապի ծառայություններ	9,000
10	Բանկային ծառայության ծախսեր, ապահովագրության ծախսեր	1,000
10.1	Բանկի ծառայություն	300
10.2	ԱՊՊԱ, տեխնիկական և այլն	700
11	Կապիտալ և ընթացիկ վերանորոգման ծախսեր	90,000
12	Գույքի և սարքավորումների ձեռքբերում, այդ թվում՝ լաբորատոր	35,000
13	Համակարգչային տեխնիկա	10,000
14	Ներդրում ՈԻՓՏ (Բաղաձուլիտ, Ոսկեհատ, Ակունք)	40,000
15	Համաֆինանսավորման ծախսեր՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար	15,000
16	Սոցիալական և զարգացման ծրագրեր ուսանողների համար	5,000
17	Գովազդային ծախսեր, հոսթինգ	1,000
18	Միջազգ. կոնֆ. ցուցադրանքների կազմակերպում և մասնակցություն	2,000
19	Վճարումներ պետական բյուջե (շահութահարկ, ԱԱՀ, տուրքեր և այլն)	60,000
20	Այլ ծախսեր	10,000
	Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2021 թ.	718,150,0

**Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ
2020 թ. ֆինանսական մուտքերի և ծախսերի նախահաշիվ (հազ. դրամ)**

Հ/հ	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաստատված տարեկան նախահաշիվ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	1504.1
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	29664.4
1	Պետ. բյուջեից մուտքեր, որից	29664.4
2	Գիտ. և գիտատեխ. գործ. պայմանագ. թեմաների իրականացում	4000.0
3	Գիտ. և գիտատեխ. գործ. բազային ֆինանս. ենթակառուցվածքի պահպ. և զարգ. ծրագիր	24764.4
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրում	900.0
5	Այլ բյուջետային մուտքեր	0.0
6	Արտաբյուջեից մուտքեր	0.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	29994.4
7	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	25540.0
8	Նյութերի ձեռքբերում	961.0
9	Գրասենյակային և տնտեսական գծով	158.4
10	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	500.0
11	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով ծախսեր	800.0
12	Կոմունալ վճարներ, որից	1500.0
13	Կապի գծով	145.0
14	Գազի, Էլ.էներգիայի գծով վճարումներ	1300.0
15	Ջրի գծով վճարումներ	55.0
16	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	35.0
17	Այլ ելքեր	500.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	1174.1

**3. Պետրոսյանի անվ. հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի
գիտական կենտրոն մասնաճյուղ
2020 թ. ֆինանսական մուտքերի և ծախսերի նախահաշիվ (հազ. դրամ)**

Յ/հ	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաստատված տարեկան նախահաշիվ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	2986.5
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՄՈՒՏՔԵՐ	149017.0
1	Պետ. բյուջեից մուտքեր, որից	109017.0
2	Գիտ. և գիտատեխ. գործ. պայմանագ. թեմաների իրականացում	11600.0
3	Գիտ. և գիտատեխ. գործ. բազային ֆինանս. ենթակառուցվածքի պահպ. և զարգաց. ծրագիր	89417.0
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրում	8000.0
5	Այլ բյուջետային մուտքեր	0.0
6	Արտաբյուջեից մուտքեր, որից	40000.0
7	Արտադրական գործունեությունից մուտքեր	20000.0
8	Նվիրատվություն / Նվիրաբերություն	0.0
9	Ֆինանս. ժամանակով. աջակցության վերադարձ	0.0
10	Միջազգային ֆինանսավորմամբ ծրագրեր	0.0
11	Խորհրդատվական գործունեությունից մուտքեր	0.0
12	Այլ արտաբյուջետային մուտքեր	20000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԵԼՔԵՐ	149917.0
13	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	98133.6
14	Հիմնական միջոցների ձեռք բերում, որից	6500.0
15	համակարգչային տեխնիկա	0.0
16	սարքեր և սարքավորումներ, լաբորատորիաների վերազինում	2000.0
17	գույքի ձեռքբերում	4500.0
18	Նյութերի ձեռքբերում, որից	7398.4
19	քիմ. ռեակտիվներ	1500.0
20	պարարտանյութեր	1000.0
21	սերմեր	0.0
22	այլ նյութեր	4898.4
23	Գիտական միջոցառումների կազմակերպում, աշխատակիցների վերապատրաստում	2000.0
24	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	200.0
25	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	600.0
26	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով ծախսեր	4500.0
27	Քաղ. Իրավական պայմանագրեր, գյուղ տեխնիկայի վարձակալություն	5800.0
28	Կոմունալ վճարներ, որից	14985.0
29	կապի գծով	560.0
30	գազ	2500.0
31	Էլ. Էներգիա	11600.0
32	ջրի գծով վճարումներ	250.0
33	այլ կոմունալ վճարումներ	75.0
34	Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով ծախսեր	500.0
35	Կապիտալ վերանորոգման աշխատանքներ	0.0
36	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	8500.0
37	Այլ ելքեր	800.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	2086.5

**Ոսկեհատի խաղողագիտագործության գիտական կենտրոն մասնաճյուղ
2020 թ. ֆինանսական մուտքերի և ծախսերի նախահաշիվ (հազ. դրամ)**

Հ/հ	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաստատված տարեկան նախահաշիվ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	177.6
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	48808.0
1	Պետ. բյուջեից մուտքեր, որից	38808.0
2	Գիտ. և գիտատեխ. գործ. պայմանագ. թեմաների իրականացում	0.0
3	Գիտ. և գիտատեխ. գործ. բազային ֆինանս. ենթակառուցվածքի պահպ. և զարգ. ծրագիր	37608.0
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրում	1200.0
6	Այլ բյուջետային մուտքեր	0.0
7	Արտաբյուջեից մուտքեր, որից	10000.0
8	արտադրական գործունեությունից մուտքեր	10000.0
9	միջազգային ֆինանսավորմամբ ծրագրեր	0.0
10	խորհրդատվական գործունեությունից մուտքեր	0.0
11	այլ արտաբյուջետային մուտքեր	0.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	47658.0
12	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	33338.0
13	Հիմնական միջոցների ձեռք բերում, որից	4000.0
14	համակարգչային տեխնիկա	500.0
15	սարքերի և սարքավորումների ձեռքբերում	2000.0
16	գույքի ձեռքբերում	1500.0
17	Նյութերի ձեռքբերում, որից	3000.0
18	պարարտանյութեր	500.0
19	այլ նյութեր	2500.0
20	Գրասենյակային և տնտեսական գծով	100.0
21	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	2600.0
22	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով	720.0
23	Կոմունալ վճարներ, որից	1400.0
24	կապի գծով	200.0
25	գազի, էլ.էներգիայի գծով վճարումներ	600.0
26	ջրի գծով վճարումներ	500.0
27	այլ կոմունալ վճարումներ	100.0
28	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	1000.0
29	Այլ ելքեր	1500.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	1327.6

**ՀԱԱՀ Շիրակի Մ. Թումանյանի անվ. գյուղ. քոլեջ մասնաճյուղ
2020 թ. ֆինանսական մուտքերի և ծախսերի նախահաշիվ (հազ. դրամ)**

Հ/հ	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Տարեկան նախահաշիվ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	1362.7
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	45,076.3
1	Պետ. բյուջեից մուտքեր, որից	43,061.3
2	միջին մասնագիտական կրթ. ուսանող. նպաստների փոխհատուցում	37,000.0
3	միջին մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	4,061.3
4	այլ բյուջետային մուտքեր	2,000.0
5	արտաբյուջեից մուտքեր, որից	2,015.0
6	ուսման վարձերի գծով	1,940.0
7	այլ արտաբյուջետային մուտքեր	75.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	46,856.3
8	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	37,200.0
9	Կրթաթոշակի վճարումներ	4,061.3
10	Հիմնական միջոցների ձեռք բերում, որից	2,900.0
11	համակարգչային տեխնիկա	800.0
12	սարքերի և սարքավորումների ձեռքբերում	1,500.0
13	ուսումնական գույքի (այդ թվում՝ գրականության) ձեռքբերում	100.0
14	այլ գույքի ձեռքբերում	500.0
15	Նյութերի ձեռքբերում, որից	25.0
16	քիմ. ռեակտիվներ	25.0
17	Գրասենյակային և տնտեսական գծով	260.0
18	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	150.0
19	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով	250.0
20	Կոմունալ վճարներ, որից	1,010.0
21	կապի գծով	220.0
22	գազի գծով վճարումներ	-
23	Էլ.էներգիայի գծով վճարումներ	600.0
24	ջրի գծով վճարումներ	60.0
25	այլ կոմունալ վճարումներ	130.0
26	Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով	400.0
27	Կապիտալ վերանորոգման աշխատանքներ	-
28	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	100.0
29	Այլ ելքեր	500.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	- 417.3

**ՀԱԱՀ հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղ
2020 թ. ֆինանսական մուտքերի և ծախսերի նախահաշիվ (հազ. դրամ)**

Հ/հ	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Տարեկան նախահաշիվ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	17,294.3
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	52,500.0
1	Պետ. բյուջեից մուտքեր, որից	13,500.0
2	բարձրագույն մասնագիտ. կրթ. ուսանող. նպաստ. ձևով ուս. վարձի փոխհատուցում	7,100.0
3	միջին մասնագիտական կրթ. ուսանող. նպաստների փոխհատուցում	5,900.0
4	բարձրագույն մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	-
5	միջին մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	500.0
6	այլ բյուջետային մուտքեր	-
7	Արտաբյուջեից մուտքեր, որից	39,000.0
8	ուսման վարձերի գծով	39,000.0
9	այլ արտաբյուջետային մուտքեր	-
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	53,500.0
10	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	38,000.0
11	Կրթաթոշակի վճարումներ	500.0
12	Հիմնական միջոցների ձեռք բերում, որից	950.0
13	համակարգչային տեխնիկա	300.0
14	Սարքերի և սարքավորումների ձեռքբերում	500.0
15	ուսումնական գույքի (այդ թվում՝ գրականության) ձեռքբերում	150.0
16	Նյութերի ձեռքբերում, որից	500.00
17	այլ նյութեր	500.0
18	Գրասենյակային և տնտեսական գծով	700.0
19	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	1,500.0
20	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով	2,000.0
21	Կոմունալ վճարներ, որից	1,650.0
22	կապի գծով	250.0
23	գազի գծով վճարումներ	650.0
24	Էլ.էներգիայի գծով վճարումներ	400.0
25	ջրի գծով վճարումներ	250.0
26	այլ կոմունալ վճարումներ	100.0
27	Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով	5,000.0
28	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	200.0
29	Ուս. ֆոնդ. երիտաս. ծրագիր և ուս. խորհուրդ.	500.0
30	Քաղ. իրավական պայմանագրերով վճարումներ	1,000.0
31	Այլ ելքեր	1,000.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	16,294.3

**ՀԱԱՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղ
2020 թ. ֆինանսական մուտքերի և ծախսերի նախահաշիվ (հազ. դրամ)**

Հ/հ	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաստատված տարեկան նախահաշիվ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	47,296.4
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	91,703.6
1	Պետ. բյուջեից մուտքեր, որից	-
2	բարձրագույն մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	-
3	այլ բյուջետային մուտքեր	-
4	Արտաբյուջեից մուտքեր, որից	91,703.6
5	ուսման վարձերի գծով	91,603.6
6	այլ արտաբյուջետային մուտքեր	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	102,000.0
7	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	68,000.0
8	Հիմնական միջոցների ձեռք բերում, որից	15,700.0
9	սարքերի և սարքավորումների ձեռքբերում	7,000.0
10	ուսումնական գույքի (այդ թվում՝ գրականության) ձեռքբերում	5,700.0
11	այլ գույքի ձեռքբերում	3,000.0
12	Նյութերի ձեռքբերում, որից	800.00
13	քիմ. ռեակտիվներ	350.0
14	այլ նյութեր	450.0
15	Գրասենյակային և տնտեսական գծով	650.0
16	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	1,500.0
17	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով	2,600.0
18	Կոմունալ վճարներ, որից	3,450.0
19	կապի գծով	1,300.0
20	գազի գծով վճարումներ	1,200.0
21	Էլ.էներգիայի գծով վճարումներ	800.0
22	ջրի գծով վճարումներ	70.0
23	այլ կոմունալ վճարումներ	80.0
24	Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով	4,200.0
25	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	300.0
26	Քաղ. իրավական պայմանագրերով վճարումներ	1,000.0
27	Այլ ելքեր	3,800.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	37,000.0